№ 145 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 8

1909

ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 8 № 145

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 կոպ.

Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՔՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ
(37-ՐԴ ՏԱՐԻ)

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յուլիսի 1-ից մինչև տարվայ վերջը 5 ր. 50 կ.:
Ամերիկա՝ 3 դոլար, Եւրոպա՝ 15 ֆրանկ, Թուրքիա՝ 60 ղրուշ:
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակագրոշմ:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метиль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршалковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

Ժողովրդական Տուն
ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ
Ժողովրդական ներկայացումների կազմակերպ.
Հայկական սեկցիան
կը ներկայացնէ
Հինգշաբթի, յուլիսի 9-ին
ԹՈՒՂԹ ԽԱՂԱՑՈՂԻ ԿԵԱՆՔԸ
դրամա 5 գործ. թարգմ. Մ. Պատկանեանի
Սկիզբն է երեկոյեան 8½ ժ.:
Տեղերի գները 50 կ. մինչև 5 կ.:
Հետեւեալ ներկայացումը յուլիսի 18-ին:
(առ.) 635. 2—1

Երևանի Հայոց Թեմական Դպրանոցի Վարչութիւնը 1909—1910 ուսումն. տարեշրջանի համար հրաւիրում է Ռուսաստանի կամ արտասահմանի համալսարանական

ՏԵՍՈՒՉ,

որ շաբաթական կունենայ նաև 6 դաս՝ 60-ական ռ. վարձատրութեամբ:
Տեսչական ռոճիկն է 1500 ռ.:
Պէտք է դիմել Հոգաբարձութեան անունով մինչև յուլիսի 15-ը:
Պահանջվում է ուղարկել ուսման վկայականները կամ նրանց հարազատ պատճէնները:

ԱԲԱՍԹՈՒՄԱՆՈՒՄ
Բժիշկ
Մ. Ն. ՄՈՍԷՍԵԱՆ
Ընդունում է հիւանդներին՝ ներքին և երեխաների հիւանդութիւններ:
Ամարանոց Սկօրովի:
(Չ. շ.) (առ) 631. 5—1

ԹԻՖԼԻՍՈՒՄ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
երթևեկ հիւանդների համար ամեն օր, Վօկզալնայա 8, տ. Էնֆիլաճեանցի:
Տելեֆոն 695
Ե. Գ. ՅԷԴՈՐՕՎ ամեն օր, բացի չորեքշաբթի և կիրակի օրերից, 8½-ից մինչև 9½, ներքին հիւանդ.:
Վ. Դ. ԳԱՄԲԱՇԻՋԷ ամեն օր, բացի կիրակի օրերից, 11—12 ժամը, ներքին և երեխաների:
Բ. Ա. ՊՕՊՕՎԵԱՆ երկուշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ 12—1 ժամը, կոկորդի քթի և ականջի:
Գ. Մ. ՄԱԿԱՐԵԱՆ երեքշ. և ուրբաթ օրերը 12—1 ժ., ներքին:
Ա. Ն. ԴԻԱՍԱՄԻՋԷ ամեն օր, 11½-ից մինչև 12½ ժ., սիֆիլիս և կաղուկ հիւանդութիւններ:
Ն. Մ. ՄԵԼԻՔՕՎ ամեն օր, խիրուրգիական
Ի. Դ. ԳՕՄԱՐԹԵԼԻ ամեն օր, սրբքոս և երեխաների, 2—3 ժամը:
Բ. Ս. ՄՈՒՍԷԼՕՎ ամեն օր, բացի կիրակի օրերից, 2—2½ ժ., աչքի հիւանդ.:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Գ. ՄԻՐԶՕՅԵԱՆ ամեն օր, բացի կիրակի օրերից, 6—7 ժ., ներքին և երեխաների:
Ն. Գ. ԶԻԶԻՆԱՁԷ ամեն օր, բացի կիրակի օրերից, 6—7 ժ., ներքին և երեխաների:
Հիւանդանոցում կատարվում են միկրոսկոպիական, բակտերիոլոգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս ծաղիկի պատուաստում և ծծմայրերի քննութիւն: Վճար խորհրդի համար 50 կոպէկ:
(օ. մ.) ա. 38. 100—59

ՊԱՏԱՌՆԵՐ
(ОБОИ)
ԷՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼԻ
Ֆաբրիկայի
Գտնվում է Կայսրութեան բոլոր մեծ քաղաքներում:
Բաժանմունքը Թիֆլիսում—Գօլովինսկի պր., 21, Արտիստ. Ընկ. շինութ.
Գները ֆաբրիկային են:
(Չ. շ.) ա. 197. 25—17

ԻՆՔՆԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

I

Մեր անդրկովկասեան մի քանի հիմնարկութիւններ միաժամանակ մտադիր են իրանց նուիրել տեղական ինքնավարութեան խնդիրների քննութեան և մշակութեան:

Նրանցով սկսում են զբաղվել նահանգական վարչութիւնները, որոնց պաշտօնապէս առաջարկված է մշակել տեղական ինքնավարութեան ծրագիրը. Նրանցով որոշել է զբաղվել Թիֆլիսի նահանգի ազնվականութիւնը: Այդ խնդիրներով հետաքրքրված են Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութիւնը և Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը:

Անդրկովկասի տեղական զեմստվային ինքնավարութեան խնդիրները իրանց բնաւորութեամբ տարբերվում են Ռուսաստանի միւս մասերի ինքնավարական խնդիրներից, որովհետև Անդրկովկասը ներկայացնում է բազմազանութիւն և բազմերանգութիւն թէ տնտեսական, թէ վարչական և թէ ազգագրական տեսակէտներով:

Բայց այդ բազմերանգութիւնը ոչ միայն ամենևին չէ նուազեցնում տեղական ինքնավարութեան նշանակութիւնը և չէ փոքրացնում նրա կարևորութեան ոյժը, այլ և ընդհակառակը մատնացոյց է լինում այն բանին, որ միայն տեղական ազգաբնակութեան ժամանակցութիւնը կարող է բաւարար վարչական-տնտեսական կեանք ստեղծել երկրի բազմատեսակ պայմաններին համապատասխան:

Այդ բազմերանգութիւնը և բազմազանութիւնը պարտաւորական են դարձնում, որ ինքնավարական այն մարմինները, որոնք շատ մօտ են ժողովրդին և անմիջապէս շփման մէջ են նրա հետ, յատկապէս լաւ կազմակերպված լինեն Անդրկովկասում. Մեր խօսքը փոքր զեմստվային միութիւնների մասին է, գիւղամբերի, փաստեալ գործունէութեան մասին ինքնավարական ասպարէզում:

Արդարև փոքր շրջաններում, մի քանի գիւղերի խմբակցութեան մէջ ուժեղ հեշտութեամբ հնարաւոր է ունենալ փոխադարձութիւն, քան գաւառական և նահանգական համախմբումներում: Եւ փոքր զեմստվային միութեան մէջ հեշտութեամբ է վճռվում այնպիսի մի խնդիր, ինչպէս է այս ու այն հիմնարկութեան բացման, կամ օրինակ՝ տեղական լեզուների գործածութեան:

Փոքր ինքնավարական շրջանում լինում է մէկ կամ առ առաւելն երկու լեզու և ուրեմն գործնականապէս բոլորովին հնարաւոր է տեղական լեզուով վարել գործերը, առանց դժուարութիւններ յարուցանելու ազգաբնակութեան համար, ինչպէս ներկայումս գիւղական ինքնավարութեան մէջ ազատ կերպով գործ է ածվում տեղական լեզուն:

Տեղական ինքնավարութեան զեմստվային ժարմինները մի այնպիսի անհրաժեշտութիւն են Անդրկովկասի համար, որպիսին դուցէ չէ զգացվում Ռուսաստանի այն շրջաններից շատերում, ուր վաղուց մացված է ինքնավարութիւնը:

Բայց ճիշդ է, որ Անդրկովկասի իւրատեսակ պայմանները պահանջում են աչքի առաջ ունենալ տեղական առանձնայատկութիւնները և մշակելով ինքնավարութեան ծրագիրը՝ հաշուի առնել այն բոլորը, ինչ որ բարդացնում է և ընորոշ դարձնում տեղական ինքնավարական գործի իրականացումը:

Այդ հարցը, այն է՝ անդրկովկասեան տեղական ինքնավարութեան ծրագրի մշակման հարցը, այժմ իբրև հրապարակի հարց, իբրև ընթացիկ հոգատարութեան առարկայ գրված է մեր առաջ:

Նրան պէտք է մշակել և ձևակերպել:

Ա. Քալանթար

ԴՕԼԳՈՊՕԼՕՎԸ ՄԷՇԷԴԻՍԷՐՈՒՄ

Մէշէդիսէր, 2 յուլիսի

Յունիսի 26-ին, Աստարաբադի ռուսաց հիւպատոս Դօլգոպոլովը 50 հոգի կօզակների հետ միասին երեկոյեան ժամը 3-ին ժամանեց Մէշէդիսէր:

Կօզակները, ռուսական դրօշակը բարձրացրած, երգելով ներս մտան քաղաք:

Սկզբում հիւպատոսը հիւրընկալվեց Փանեանցի տանը, ապա մի քանի րոպէից յետոյ գնաց տեղիս հիւպատոսական գործակալ Լիսնօզովի մօտ, թողնելով կօզակները Փանեանցի մօտ:

Տեղիս ռուսահպատակները բարձրացրել էին դրօշակներ. փոքրիկ Մէշէդիսէրը ռուսական գաղթավայրի արպատուրութիւն էր թողնում:

Ցայտնի է, որ Մանդրիովկասի տարօրինակ տպաւորութիւն թողեց ազգաբնակութեան վրա:

Պարսկաստանի քաղաքական ներկայ մռայլ հորիզոնը առիթ է տալիս իւրաքանչիւրին՝ կատարվող երևոյթների տակ տեսնելու մի ինչ-որ թագուն բան: Եթէ երկիրը խաղաղ լինէր, հիւպատոսը ոչ թէ 50, այլ շատ աւելի կօզակներով էլ գալու և անցնելու լինէր, դարձեալ չէր գրաւի այն ուշադրութիւնը, ինչ որ այժմ:

Անշուշտ հիւպատոսի այսպէս շրջելն ունի իր որոշ քաղաքական նպատակները. շատերի կարծիքով՝ այս շրջանի ճանապարհներին ծանօթանալու համար է, որ հիւպատոսն այս շրջակայութիւնն է անում:

Հիւպատոսն իր գալստեան երկրորդ օրը տեղիս մի քանի անձնաւորութեանց հարցաքննութեան ենթարկեց Պանօվի խնդրի վերաբերեալ: Ըստ սովորականին կազմվեց արձանագրութիւն մարտի 11-ին կատարված դէպքի առիթով:

Գալստեան երրորդ օրը, առաւօտեան ժամը 10-ին, Դօլգոպոլովը մեկնեց դէպի Բէնդէրգեազ:

Վէմ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Կեօլն, 4 յուլիսի

«Կեօլնիշէ-Ցայտունգ» լրագրին հեռագրում են Թէհրանից. «Յուլիսի 3-ին, կէսօրից յետոյ 5 ժամին, Լեախովը ցերեկով գնաց մէջլիս վերջնական բանակցութիւնների համար: Խաղաղութիւն է կապված: Պարսկական կազակների բրիգադան կը պահպանվի: Նոր կառավարութիւն է կազմվում, որի մէջ Սիպէհդարն ընդունում է զինուորական մինիստրի պաշտօնը: Նա միևնոյն ժամանակ և Թէհրանի ընդհանուր-նահանգապետ է հանդիսանում և, որպէս այդպիսին, արդէն իր առաջին հրամանները տուեց Լեախովին՝ քաղաքում կարգը վերականգնելու վերաբերմամբ: Շահը հրաժարվեց գահից:

«Ազգաբնակութիւնը մեծ ուրախութիւն է արտայայտում»:

Բերլին, 4 յուլիսի

Լրագիրները բաւական յոռետես ոգով են քննում դէպքերը Պարսկաստանում և այն կարծիքն են յայտնում, որ այժմ միայն առաջին անգամ լուրջ փորձութեան է ենթարկվելու անգլո-ռուսական համաձայնութիւնը:

«Թագեբլատ-Ցայտունգ» գրում է. «Զոնակ Պարսկաստանում կռիւը անգլիական և ռուսական ազդեցութիւնների մէջև աւելի ևս կը սրվի և դրա հետևանքը կը լինի այն, որ կը միանան ներքին յարաբերութիւնները և կանգ կառնէ երկրի հանգիստ զարգացումը»:

«Բերլինէր Տագէբլատ» Մահմէդ-Ալիի գահընկեցութեան մէջ տեսնում է համիսլամական քաղաքագէտների ծանր յուսախաբութիւնը, որոնք երազում էին Ռուսաստանի ընդարձակման մասին, և ապա ասում է, որ դէպքերը Պարսկաստանում արժանի են անդադրում ուշադրութեան:

«Կեօլնիշէ-Ցայտունգ» լրագիրը գահընկէց եղած շահին տխուր անձնաւորութիւն է անուանում, իսկ նրա գորգասան մուշտէիդի և Միր-Հաշիմի կողմից: Այդտեղ ասված էր, որ «զինուորագրութիւնը պիտի շարունակվի արձանագրվել միմիայն «Իսլամիէ» անջոմանում, որովհետև միակ օրինականը յիշեալ անջոմանն է. մնացեալները ապօրինի են և կեղծ, և այսուհետև միակ օրինականը ամբողջ Ատըրպատականում համարվում է «Իսլամիէն», միւսները խարդախ են և վարակված «բաբիական» ազանդով...»: Այս անգամ աւելի քան երբևիցէ ընկվեց Թաւրիզը, քան առաջներում. բոլոր փակվեց բազարը, և ամբողջ քաղաքը հաւաքվեց մզկիթներում՝ լսելու քարոզիչներին: Այդտեղ պարզաբանվեց շատ բան, յայտնվեց, որ այս յայտարարութիւնը շահի ինքրիգների հետևանքն է, և Միրզա-Հասանն ու Միր-Հաշիմն էլ շահի գաղտնի գործակալներն էին էլ ի էլ: Ժողովրդի զայրոյթը չափից անցել էր գլխաւորապէս այն առիթով, որ Թաւրիզի բնակչութեան ամբողջ ¾-ը համարում էին «բաբիներ»... Նորից առաջ եկաւ հին կասկածը և այս անգամ իրաւունք ունէին հաւատալու Միր-Հաշիմի կեղծաւորութեանը և յատին նպատակներին, որովհետև հինգ ամիս առաջ մի անգամ ևս սկզբունքային ընդհարում էր պատահել երկու առաջնակարգ անջոմանականների մէջ. առաջինը միր-հաշիմականներն էին իրանց «Իսլամիէով», իսկ երկրորդը շէյխ-սալիմականները իրանց «Մախսուդիէով». այդ երկու հակառակորդ ֆրակցիաներին կարելի է համեմատել Ռուսաստանի հոկտեմբերականների և

Թաւրիզի բոլոր ունևոր դասակարգերը և գլխաւոր մուշտէիդները. այդտեղ են սեղանաւորները, կալուածատէրերը, կապիտալիստները, արիստոկրատները, աղաները: Դավաչի թագուհի էին և վերջին դէպքերի խրատնոչակ հերոսներ՝ Հաշիմ-Միրզա-Հասան մուշտէիդը և Միր-Հաշիմը. այդ թագուհի էր հաստատված և չարաբաստիկ «Իսլամիէ» ժողովարանը. իսկ դրա անմիջական շարունակութեամբ՝ սարի լանջում ընկած են Սուրխաբ, Բաղ-Մէշա և Շէշ-Գիլան թաղերը, որտեղ կենում էին յայտնի Սուլէյ-Նիզամը, Զաղամ-Լաշկարը, որտեղից մեծաչափ Բահիմխանի հրոսակախումբը. մի խօսքով՝ այդ կարևոր և միմեանց կպած թաղերն էին, որ ազատագրում սխոյական հանդիսացան Խաբան և Ամիր-Խեղ թաղերին, որոնք սահմանակից էին միմեանց: Բարեբաղդութիւնը այնտեղ էր միայն, որ Արքը գտնվում էր Խաբանի և Զնար-Դարի ծայրերում, որոնք կռիւների ընթացքում սահմանադրականների համար խոշոր դիր են կատարել: Ահա Թաւրիզի դիրքն ու նկարագիրը, որը՝ ինչպէս ասացի՝ մի մօտաւորական նկարագիր է՝ կազմված սեփական իմացածով և կողմնակի հարցերով: Այժմ դատանքը պատմութեանս շարունակութեանը՝ ընդհատման կէսից:

Թէհրանի դէպքերը առաջին օրը շշմեցրին Թաւրիզցիներին. նրանք չէին կարող երևակայել, որ շահը կարող է դիմել մի այդպիսի յանդուգն քայլի՝ այն հանդիսաւոր խոստումից և երդումից յետոյ, որ նա կատարեց մէջլիսում: Բայց իրողութիւնը մնաց իրողութիւն. երկրորդ օրը ամեն ինչ յայտնի եղաւ, և Թաւրիզը ալեկոծվեց: Նրա զրդումը այն ատելանքի հասաւ, որ, բռնպէսական տպաւորութեան տակ, սկսեցին պատրաստվել հէնց նոյն օրը և եթ գնալ Թէհրան և սպանել շահին ու կործանել արքունիքը... Բայց դուրս եկան անջոմանների գլխաւոր դեկավարները և յայտարարեցին, որ ամբոխի գնալը աւելորդ է, թողով որ ցանկութիւն ունի՝ գայ և անջոմանների տորագրվէ, որպէս ֆեդայի-զինուոր, ստանայ ձի, հրացան և փող, ապա կանօնաւոր խմբերով հետզհետէ գնան հաւաքվեն Ղազվին և միահամուռ ոյժով գրոհ տան մայրաքաղաքի վրա...

Սկսվեց զինուորագրութիւնը, և երկու օրում կամաւորների թիւը հասաւ մինչև 10,000 հոգու. նոյնիսկ 500-ից բաղկացած մի առաջապահ խումբ արդէն մեկնել էր և հասել քաղաքից 15 վերստ հեռաւորութեան վրա գտնվող Վասբինջ գիւղը: Սակայն երրորդ օրը մի անակնկալ դէպք դադարեցրեց զինուորագրութիւնը, և յետ կանչվեց գնացած առաջապահ խումբը: Այդ դէպքը հետևեալն էր:

Յունիսի 10-ի առաւօտը, երբ մարդիկ ըստ սովորութեան գնում էին շուկայ իրանց գործերին, նկատվում էին խմբեր, որոնք, հաւաքված, կարդում էին մի ինչ-որ սեծածաւալ յայտարարութիւն, որ փակված էր շուկայի և փողոցների պատերին. այդ յայտարարութիւնը գրված էր «Իսլամիէ» անջոմանից, որ նոյնն է, թէ Միրզա-Հասան մուշտէիդի և Միր-Հաշիմի կողմից: Այդտեղ ասված էր, որ «զինուորագրութիւնը պիտի շարունակվի արձանագրվել միմիայն «Իսլամիէ» անջոմանում, որովհետև միակ օրինականը յիշեալ անջոմանն է. մնացեալները ապօրինի են և կեղծ, և այսուհետև միակ օրինականը ամբողջ Ատըրպատականում համարվում է «Իսլամիէն», միւսները խարդախ են և վարակված «բաբիական» ազանդով...»: Այս անգամ աւելի քան երբևիցէ ընկվեց Թաւրիզը, քան առաջներում. բոլոր փակվեց բազարը, և ամբողջ քաղաքը հաւաքվեց մզկիթներում՝ լսելու քարոզիչներին: Այդտեղ պարզաբանվեց շատ բան, յայտնվեց, որ այս յայտարարութիւնը շահի ինտրիգների հետևանքն է, և Միրզա-Հասանն ու Միր-Հաշիմն էլ շահի գաղտնի գործակալներն էլ էին: Ժողովրդի զայրոյթը չափից անցել էր գլխաւորապէս այն առիթով, որ Թաւրիզի բնակչութեան ամբողջ ¾-ը համարում էին «բաբիներ»... Նորից առաջ եկաւ հին կասկածը և այս անգամ իրաւունք ունէին հաւատալու Միր-Հաշիմի կեղծաւորութեանը և յատին նպատակներին, որովհետև հինգ ամիս առաջ մի անգամ ևս սկզբունքային ընդհարում էր պատահել երկու առաջնակարգ անջոմանականների մէջ. առաջինը միր-հաշիմականներն էին իրանց «Իսլամիէով», իսկ երկրորդը շէյխ-սալիմականները իրանց «Մախսուդիէով». այդ երկու հակառակորդ ֆրակցիաներին կարելի է համեմատել Ռուսաստանի հոկտեմբերականների և

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՊՍՏԱՄԲ ԹԱՒՐԻԶԸ

(10-ամսեայ կռիւների ընդհանուր նկարագիրը)

IV *)

Այստեղ կարևոր ենք համարում նկարագրել Թաւրիզ քաղաքի դիրքը, գլխաւոր թաղերը և այն վայրերը, որոնք եղել են գլխաւոր դէպքերի թատերաբեմը: Նկատենք, որ ամեն ինչ մօտաւորական հաշով է, որովհետև, ինչպէս յայտնի է, Թաւրիզը և առհասարակ ամբողջ Պարսկաստանը պաշտօնական վիճակագրութիւն չունի:

Թաւրիզը Ատրպատականի կենտրոնական քաղաքն է. նա ընկած է այդ նահանգի հիւսիսային ծայրում՝ թիկն տուած Էյնալի սարի լանջերին. դիրքը աւելի կիսալուսնաձև է՝ հիւսիսից հարաւ. ամբողջ շրջապատը հաշվում է մօտ 20 ռուսական վերստ (ըստ շտաբի՝ 24). երկարութեան կենտրոնական գիծը 10 վերստ, իսկ լայնութեանը 6 վերստ: Քաղաքի ճիշդ կենտրոնում խրտիում է Արք կոչված միջնաբերդը, որի գոյութեան շրջանը հաշուում են Յազկերտների ժամանակից. ստորին՝ մակերևոյթային մասի տրամագիծը մէկ վերստ տարածութիւն ունի, որտեղ շինված են բազմաթիւ՝ մօտ 100 շտեմարաններ, սենեակներ և ռազմամթերքի գաղտնի ներքնատներ. շրջապատող պարիսպը ունի 10-ի չափ աշտարակներ, որոնք ծառայում են որպէս ամրոցներ. կենտրոնական մասում բարձրացած է իսկական միջնաբերդը, որ մօտ 500 ոտք բարձրութիւն ունի: Այդ հսկայի չորս կողմը սփռված է լայնածաւալ քաղաքը իր 17 մեծ թաղերով և վեց արուարձաններով, որոնք հետեւեալներն են ըստ մեծութեան կարգի.—Դավաչի թաղ՝ մօտ 20,000 տուն, Խիա բան՝ 15,000, Բաղ-Մէշա՝ 10,000, Քիւչաթաղ՝ 10,000, Սուրխաբ՝ 8000, Ամիր-Խեղ՝ 8000, Շէշ-Գիլան՝ 6000, Նոբար՝ 5000, Լիլաւա՝ 5000, Մարալան՝ 5000, Զնար-Դար՝ 5000, Ահրաբ՝ 4000, Գեազրան՝ 4000, Հեօքմարաղ՝ 4000, Ստամբուլ-Գափի՝ 4000, Գեաջիլը՝ 4000, Վարջի՝ 3000 տուն: Գումար 17 թաղերի՝ 120,000 տուն կամ 600,000 բնակիչ: Այս թաղերը կազմում են քաղաքի ամբողջական կամ կենտրոնական մասը: Իսկ արուարձանները հիւսիս-արևմտեան մասում Խաթիր՝ 2000 տուն, Վալբմ՝ 3000, Ղարամալիք՝ 3000, Շամղազան՝ 2000, իսկ արևելեան մասում Գուլլէ՝ 1000 և Բարինջ՝ 1000 տուն, որ միասին կազմում են 10,000 տուն կամ 50,000 բնակիչ: Ուրեմն ամբողջ Թաւրիզը իր ամենամօտիկ համարեա մի ամբողջութիւն կազմող արուարձաններով կազմում է 130,000 տուն 650,000 բնակչով, չը նայած որ շատերը այդ թիւը հաստատում են 150,000 տան կամ մէկ միլիոն բնակչի:

Թաղերի ինչպէս որ մեծութեան՝ նոյնպէս և հարստութեան կողմից առաջին տեղը բռնում են Դավաչին, Սուրխաբը, Բաղ-Մէշան և Շէշ-Գիլանը: Այդտեղ են բնակվում

---

*) Տես «Մշակ» № 144.

ծունկերութեան եղանակը դէպի ռուսաց և անգլիական դեսպանները՝ զգալի կօմեդիա։ Լրագիրը կարծում է, որ խաղաղութեան և հանգստութեան վերականգնումը մանուկ շահի վարչութեան տակ կախված է նախ և առաջ խնամակալի բնաւորութիւնից և նոր մէջլիսի անդամների չափաւորութիւնից։ (Հ. Գ.)

—

Լօնդոն, 4 յուլիսի

Յուլիսի 3-ին Բէյսուէրին հեռագրում են Թէհրանից. «Անգլիական և ռուսական միսսիաների առաջին թարգմանները առաւօտեան այցելեցին մէջլիսը և խնդրեցին Սիփէհդարին և սարդար Ասադին հաղորդել իրանց, թէ ինչպէս են վարվելու կօզակների բրիգադայի հետ։ Նացիօնալիստների պարագլուխները յայտնեցին, որ բրիգադան կը պահպանէ զէնքը և կը մնայ Լեախովի հրամանատարութեան տակ, որը սակայն անմիջապէս կը հպատակվի զինուորական մինիստրին։ Մատդրութիւն կայ միացնել կօզակներին նացիօնալիստական զօրքերի հետ ոստիկանական ծառայութեան համար քաղաքում և անվտանգ դարձնելու համար խուժանը, որ դեռ ևս շարունակում է հրացանաձգութիւնը։ Կը կազմվի ժամանակաւոր կառավարութիւն, որի կազմի մէջ ի միջի այլոց կը մտնեն Սիփէհդարը և սարդար Ասադը։

«Ռուսական զօրքերը յուլիսի 3-ի առաւօտեան հասան Ղազվին»։ (Հ. Գ.)

—

Թէհրան, 4 յուլիսի

Յուլիսի 3-ին ազգային ժողովուն, որը բաղկացած էր մուշտեհիդներից, մեծամեծներից և նացիօնալիստների զինուորական պարագլուխներից, մէջլիսի առաջ հրապարակի վրա հաւաքված ժողովրդի անդադիր ամբոխի ներկայութեամբ շահ է հրատարակված թագաժառանգ պրինցը, խնամակալ է նշանակված Ագիդ իլ-Միւլքը, որը Ղաջարների ընտանիքի գլուխ է հանդիսանում, Սիփէհդարը նշանակված է զինուորական մինիստր և Թէհրանի ընդհանուր նահանգապետ։

Կէսօրից յետոյ Լեախովը, բախտիար հրացան ձիգների հետ միասին, գնաց մէջլիս ժողովրդի բարձրաձայն խրախուսական բացականչութիւնների ուղեկցութեամբ, որը աղաղակում էր «բրաւօ Լեախով»։ Նացիօնալիստական զինուորական պարագլուխները ծանուցին նրան, որ նա ժամանակաւորապէս կը շարունակէ կօզակների բրիգադայի հրամանատարութիւնը զինուորական մինիստրի հրամանների ճիշդ կատարման պայմանով։ Այդ հաճայնութիւնը հաղորդվեց ռուսական և անգլիական միսսիաներին։

Շահի տեղափոխութիւնը ռուսական միսսիայում սկսվեց յուլիսի 3-ին, առաւօտեան 8 ժամից, երբ Զէրգէնդեից եկաւ նրա շքախումբը։ Կէս ժամից յետոյ շահը ձի հեծած իր դաւակների ուղեկցութեամբ մտաւ միսսիայի այգին, ուր նրան դիմաւորեցին զօրքերի հաւատարմատարը, միսսիայի պաշտօնեաները և պահախումբը, որը նրան զինուորական պատիւներ տուեց։ Շահը ողջունեց պահախմբին ռուսերէն։ Իսկոյն և եթ եկան հնդկական սիպայները անգլիական միսսիայի պահախմբից։ Մի կէս ժամ սրայ պահապան են կանգնած շահի գրաւած սենեակների մօտ։ Միսսիայի ֆլագշտոկի վրա ծածանվում են ռուսական և անգլիական դրօշակները։ Ամբողջ գիշերվայ ընթացքում պալատից միսսիա էին տեղափոխում շահի անձնական գոյքը։ Նրա հետ միասին բաւական են նստել նրա մերձաւորները մինչև հինգ հարիւր մարդ, զօրքերը և անթիւ ծառաներ։ Տրամադրութիւնը հանգիստ է։ Սարդար Ասադը և Սիփէհդարը կօզակների բրիգադայի աջակցութեամբ եռանդուն միջոցներ են ձեռք առնում կարգը վերականգնելու և օտար հիմարկութիւններից, օտարահպատակներից և մասնաւորապէս ռուսական բանկից յափշտակութիւնները դադարեցնելու համար։ (Հ. Գ.)

—

Թէհրան, 5 յուլիսի

Մահմէդ-Ալի շահի գահից հրաժարումը տեղի ունեցաւ ռուսական միսսիայում յուլիսի 4-ին առաւօտեան։ Երբ ռուսական զօրքերի հաւատարմատարը հաղորդեց նրան Սիփէհդարի և սարդար Ասադի հեռագիրը, ուղղված Ռուսաստանի և Անգլիայի ներկայացուցիչներին, Մահմէդ-Ալին յայտնեց, որ հրաժարվում է ընդունել իր մօտ ուղարկվող պատգամաւորութիւնը, որովհետև, հեռանալով իր պալատից, ինքը հէնց դրանով հրաժարվեց գահից։ Միևնոյն ժամանակ Մահմէդ-Ալին մի փոքր տատանումից յետոյ տուեց իր համաձայնութիւնը, որ շահի գահը բարձրանայ իր ժառանգ վալիդ Սուլթան Ահմէդ-Միրզան։

Յուլիսի 5-ին Քիրմանշահում տեղի ունեցան անկարգութիւններ։ Ազգաբնակութիւնը երկու թշնամական կուսակցութիւնների բաժանվեց։ Երկրորդ օրն է, որ շուկաները փակված են։ Քաղաքում տեղի ունի սաստիկ հրացանաձգութիւն։ Գնդակները ներս են թռչում ռուսական հիւպատոսարանի բակը։ Նահանգապետն անզօր է վերականգնելու կարգը։

Յուլիսի 5-ին Համադանից հաղորդում են, որ քաղաքը յեղափոխականների ձեռքումն է, որոնք յօգուտ իրանց հաւաքում են հարկերը և պօստհեռագրական եկամուտները։ Յեղափոխական միլիցիօնէրների թիւը մեծանում է։ Բարրիկադներ են սարքվում, սակայն առ այժմ կարգը քաղաքում չէ խախտվել։

Յուլիսի 5-ին մանկահասակ վալիդ Սուլթան Ահմէդ-Միրզան ռուս-անգլիական պահակախմբի և դաստիարակ Սմիրնովի ուղեկցութեամբ ռուսական միսսիայից տարվեց Սուլթանաբադի պալատը, ուր արտակարգ ծայրագոյն խորհրդի պատգամաւորութիւնը շնորհաւորելով շահ հրատարակեց նրան։

Յուլիսի 3-ին յաբինսկի եօսանչեռեռ գնացքը աջողութեամբ մօտեցաւ Ղազվինին։ Քաղաքից դուրս գտնվող Պոլեակօվնայա ուղեկալի մօտ գնդին դիմաւորեցին ռուսական հիւպատոս Ավսէենկո, ռուսահպատակները և վաճառականները, Էնզելի-Թէհրանեան խճուղու վարչութեան և բանկի ծառայողները իրանց ամբողջ կազմով կանանց և երեխաների հետ միասին, նոյնպէս անուանի տեղացիների պատգամաւորութիւնը։ Պարսկական քարոզարը և տեղական ոստիկանապետը ողջոյնի ճառեր արտասանեցին, մատուցին աղ ու հաց, հիւրասիրութիւն առաջարկեցին։ Գունդը Ղազվինի գլխաւոր փողոցներով անցաւ երաժշտութեամբ և երգերով և բանկ դրեց քաղաքից դուրս Սիփէհդարի ստուերախիտ այգում վերջինի նախագահութեամբ։ Մաղթանք կատարվեց։ Տեղական երգեցիկ խմբի մաղթած բազում տարիները և գնդի բարձրաձայն ուրայի ձայները թագաւորի կենացի ժամանակ թնդացրին Ղազվինի հովիտը։ Խաղաղ տեղացիների խիտ խմբերը սիրով նայում էին գնդին։ Տպաւորութիւնը նպաստաւոր է։ Քաղաքում ամեն ինչ հանգիստ է։ (Հ. Գ.)

—

Թէհրան, 5 յուլիսի

Յուլիսի 4-ին Սիփէհդարը և սարդար Ասադը դիմեցին Ռուսաստանի և Անգլիայի ներկայացուցիչներին հետևեալ հեռագրով. «Այսօր Բահարստանում գումարված ազգային խորհրդի որոշման համաձայն անհրաժեշտ է, որ խորհրդի պատգամաւորութիւնը ներկայանայ նախկին շահ Մահմէդ-Ալիին՝ ծանուցանելու համար նրան կառավարութեան փոփոխութեան մասին։ Եւ որովհետև շահը գտնվում է ներկայումս որպէս փախստական ռուսական միսսիայում անգլիական և ռուսական հովանաւորութեան ներքոյ, խնդրում ենք նորին մեծութիւնից վաղը ժամ նշանակել, երբ նա կընդունի պատգամաւորութիւնը»։ (Հ. Գ.)

—

Թէհրան, 6 յուլիսի

Այստեղ հաղորդում են Արդաբիլից, որ յեղափոխականները, որոնք նահանգապետին 24 ժամ ժամանակ տուին բերդը յանձնելու համար, սկսեցին կրակ թափել նրա վրա։ Սկսվեց թնդանոթաձգութիւն, որը մի անգամ սպառնում էր հիւպատոսարանի շինութեանը։ Նահանգապետական զօրքերը կողոպտեցին և այրեցին քաղաքի այն մասը, որտեղից նրանք կրակում էին յեղափոխականների վրա։ Իսկ ֆէդայիները կողոպտում էին շուկաները և ուրիշ թաղերը։ Ընդհանուր կողոպուտի ժամանակ վնասվեցին ռուսահպատակների մի քանի գրասենեակները։ Բոլոր վերջիններին առաջարկվեց ռուսական դրօշակ բարձրացնել իրանց տների վրա և փոխադրել իրանց արժէքաւոր իրերը հիւպատոսարանի շինութիւնը։ Թնդանօթների կրակը քաղաքին առանձին վնաս չը հասցրեց, բայց կողոպտումները և հրդեհաձգութիւնները չեն դադարում։

Ալա-ուդ-Դօվլէ նշանակված է Շիրազի նահանգապետ, Մուլքիր-ուլ-Սալթանէն թաւրիզի նահանգապետ։

Սուլթանաբադում վալիդէն շահ հրատարակելու հանդիսակատարութիւնը աւարտելուց յետոյ ռուսական և անգլիական պահակախմբերը վերադարձան իրանց միսսիաները։ Նորին մեծութիւն շահ Սուլթան Ահմէդ-Միրզան իր դաստիարակ Սմիրնովի ուղեկցութեամբ կերթայ Կամրանիէ պալատը, ուր կը մնայ ժամանակաւորապէս։ Սպասվում է մինիստրութեան կազմակերպութիւնը Նասր-իլ-Միւլքի նախագահութեամբ։ (Հ. Գ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Բերլին, 5 յուլիսի

Գերմանական ուսանողների դաշնակցութիւնը, աջակցված 34 կօրպորացիաներից, դիմեց համալսարանի վարչութեանը միջնորդելով, որ օտարազգիներին թոյլ տրվի դասախօսութիւններին զրվել միայն վեց շաբաթ անցնելուց յետոյ սեմեստրի սկզբից, որովհետև, մանաւանդ բժշկական ֆակուլտէտում, օտարազգիները յաճախ բռնում են ամենալաւ տեղերը լսարաններում դեռ մինչև գերմանական ուսանողների գալը։ Համալսարանի վարչութիւնը մերժեց այդ միջնորդութիւնը այն պատճառաբանութիւնը բերելով, թէ դրա ընդունելը հաւասարազօր կը լինէր օտարազգիներին համալսարան չընդունելուն։ (Հ. Գ.)

—

Հայֆիքենդ, 5 յուլիսի

Զանգեզուրի գաւառի Կօվդադիխ գիւղի վրա յարձակում գործեցին պարսիկ աւազակները և սպանելով չորս պահապանների ու կողոպտելով գիւղը՝ փախան Պարսկաստան։ (Հ. Գ.)

—

Բերլին.—Սան-Սէբաստիանից հեռագրում են, որ եւրօպացիների դրութիւնը Մարօկկօյում սաստիկ վտանգվել է։ Սպանական պատժիչ զօրամասը գտնվում է կբիտիքական վիճակում։ Եթէ օգնական ոյժեր չուղարկվին, տեղացիները կոչընչացնեն զօրամասը։

Առելութիւնը դէպի եւրօպացիները օր ըստօրէ սաստկանում է։ Եւրօպացիներից շատերը կամաւորներ են գրվում և մտնում նուաճողական բանակի մէջ։

Սպանական կառավարութիւնը նոր օգնական ոյժեր ուղարկեց, որոնք տեղ հասնելուն պէս կը յարձակվին Զէլուան քաղաքի վրա, ուր կենտրօնացել են տեղացիները։ («Բ. Շ.»)

—

Օդէսսա, 6 յուլիսի

Իւնակների ներկայացուցիչները հեռևեալ հեռագիրն ուղարկեցին Կայսրին. «Նորին Կայսերական Մեծութիւն համայն Ռուսաստանի Կայսր Նիկոլայ II-ին։ Ոտք դնելով բալգարների համար սուրբ ռուսական հողի վրա, բալգար իւնակների դաշնակցութիւնը իր սրբազան պարտքն է համարում մատուցանել համայն Ռուսաստանի Մեծ Թագաւորին Մեծն Ռուսաստանի ձեռքով ազատված բալգարական ժողովրդի գիմնաստիական ընկերութեան սրտագին ողջոյնը»։ (Հ. Գ.)

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

—

Սալոնիկ.—Աբդիւլ-Համիդը հրաժարվել է ընդունել օսմանեան կառավարութեան ներկայացրած բանկային չեկի վրա իր ստորագրութեան խկութիւնը։

Թիւրքերի վրդովմունքը յոյների դէմ շարունակվում է։

Ցաւնական բոլոր կազմակերպութիւնների պատգամաւորները մի թռուցիկ են ուղղել Կրետէն հովանաւորող պետութիւններին, որը յանձնելու են կաբինետներին «Միութիւն և Առաջադիմութիւն» կուսակցութեան միջոցով։ Այդ թռուցիկով կօմիտէտը պահանջում է վերահաստատել Թիւրքիայի իրաւունքները Կրետէի վրա, յայտնելով որ հակառակ դէպքում հաղիւ թէ որևէ մէկը համարձակութիւն ունենայ պահպանելու [illegible] լրջի դէնքի ոյժով պաշտպանելու իր իրաւունքը։

Մակեդոնիայում կառավարութիւնը պաշարողական դրութեան միջոցին գրաւել է 400,000-ի չափ զէնք։ («Բ. Շ.»)

—

Բերլին.—Անգլիական մամուլի տեսլով, Թիւրքիայի գերմանական դեսպան Մարշալ ֆօն-Բիբերշտէյնին և ֆօն-դեր-Գոլցին յանձնարարված է համոզել Թիւրքիային հեռագրական դաշնակցութեան մէջ մտնելու։ «Բ. Շ.» *լրագրի Թրեթակի հաւաքած տեղեկութիւնների համաձայն, այդպիսի յանձնարարութիւն իրօք որ գոյութիւն ունի և դա պաշտօնաթող Բիլլօվի վերջին պետական գործն է համարվում։*

Պեսերբուրգում խօսվում է, որ Կրետէն հովանաւորող պետութիւնների ներկայացրած պատասխան նօտան չափազանց անպատշաճ է։ Նօտան ասում է, թէ պէտք է մի քանի տարի սպասել, ուր, ըստ երևոյթին, վճռել էին գրոհի դիմել Դիպլօմատիական շրջաններում չեն թագցնում, որ ներկայ պայմաններում պետութիւնները անզօր են Թիւրքիայի և Յունաստանի ընդհարման առաջն առնել, որովհետև նրանց զրդում են այդ ծայրայեղ քայլն անելու ոչ միայն քաղաքական ընդարձակութիւն ունեցող հարցերը, այլ և ցեղական ատելութիւնը, որ վերին աստիճանի լարված է այժմ։ Պետութիւնները աշխատում են միայն վէճը սահմանափակել, առանձնացնել և յոյս ունեն այդ նպատակին հասնել աւտրիական ու գերմանական արտաքին քաղաքականութեան խաղաղարար ընթացքի շնորհիւ։ («Բ. Շ.»)

—

Թիւրքական քաղաքական շրջանները մեծ ուշադրութեամբ են հետևում պարսկական անցքերին։

Թիւրք սահմանադրականների համակրանքը պարսիկ ազատամիտների կողմն է։ Սակայն բացի թէօրէտիկ հետաքրքրութիւնը դէպի ազատագրական պարսկական շարժումը, Կ. Պոլսի մի քանի շրջաններում անցքերը գնահատվում են Թիւրքիայի անմիջական շահերի տեսակէտից։ Յայտնում են այն կարծիքը, որ ներկայ անցքերը մեծ նշանակութիւն ունեն Թիւրքիայի համար, որովհետև Կ.Պոլսում շատերը հաւատացած են, որ Ասրպատականից՝ ռուս զօրքերի միջոցով ժամանակաւոր գրաւումը եթէ երկար տևի, պիտի թուլացնէ Թիւրքիայի ռազմական ոյժերը՝ պարսից սահմանի վրա։ Պոլսական «Թասվիրը էֆքարը» լրագիրը, որ արտայայտում է այդ շրջանների կարծիքները, այժմ պնդում է, որ Թիւրքական զօրքերը գրաւեն Ասրպատականի արևմտեան կողմը և մնան այնտեղ այնքան, մինչև որ ռուսները կը հեռանան Ասրպատականից։ Թիւրք կառավարութիւնը համակրանքով չէ վերաբերվում այդ կարծիքներին, սակայն նշանակալից է երիտասարդ-Թիւրքերի մի մասի այն համոզմունքը, թէ պէտք է միջամտել Պարսկաստանում կատարվող անցքերին։ («Բ. Վեդ.»)

—

Կ. Պոլիս, 6 յուլիսի

Կախաղան են բարձրացված 13 հոգի, որոնց թւում 2 գէներալ, 2 գնդապետ և յայտնի շէյխ Վահէդտտին։

Պատգամաւորների ժողովում կարդացվեց պարսկական ազատամիտ կլուբի հեռագիրը, որը ծանուցանում էր շահի փոփոխութեան մասին։ Հեռագիրը ծափահարութիւններով ընդունվեց։ Որոշվեց հեռագրով շնորհաւորութիւն մատուցանել։ Սահմանադրութեան տարեդարձը հանդիսաւոր կերպով տօնելուց յետոյ, սպասվում է կաբինետի փոփոխութիւն։ Այստեղ հաւատացնում են, որ մեծ վէզիր. կը նշանակվի Շեվքէթ փաշան, առանձին մինիստրների պօրթֆէյլները կը յանձնվեն երիտասարդ Թիւրքերին։ (Հ. Գ.)

—

Թիւրքական պարլամենտի պատգամաւորութիւնը, որ առաւօտեան կընդունվի արտաքին գործերի մինիստրութեան մէջ, ցերեկով ունկնդրութիւն ունէր թագաւորի մօտ։ Պատգամաւորութեան գլուխ է անցած Թիւրք. պարլամենտի փոխ-նախագահ Թալաաթ-բէյ։ (Հ. Գ.)

—

Կ. Պոլիս, 4 յուլիսի

Ռուսաստանի և Անգլիայի ներկայացուցիչների տեսակցութեան ժամանակ, յուլ. 2-ին, արտաքին գործերի մինիստրի և մեծ-վէզիրի հետ՝ խօսք բացվեց Թիւրքական զօրքերի ներկայութեան մասին Ուրմիայում։ Հիլմի-փաշան և Բիֆաթ-փաշան ամենախաղաղասէր դիտաւորութիւններ յայտնեցին, մատնացոյց անելով այն բանի վրա, որ զօրքերի քանակը չէ մեծանում, մտադրութիւն չը կայ գրաւել պարսկական հողը։

Յուլիսի 4-ին է սպասվում պատասխան կրետական յայտագրին։ Ունեցած ճշգրիտ

ծայրայեղ ձախակողմեանների հետ. առաջինները կամենում էին աւելի խաղաղ միջոցներով մօտենալ սահմանադրութեան և կառավարութեան աջակցութիւնը վաստակել, թողնելով երկրի կառավարութիւնը գործադիր իշխանութեան ձեռքում։ Իսկ երկրորդները, ընդհակառակը, ոչ մի վստահութիւն չէին տածում դէպի կառավարութիւնը և կամենում էին երկրի կառավարութեան դեկը յանձնել պարլամենտին. նոյնիսկ շատերը ցանկանում էին տապալել թագաւորութիւնը և հաստատել հասարակապետութիւն։ Ահա այդ օրվանից երկու ֆրակցիաները միշտ կախածով էին վերաբերվում դէպի միմեանց։ Այսօր այդ խնդիրը աւելի պարզվեց, երբ հետևեալ պատճառաբանված եզրակացութիւնը դուրս բերեցին. «Յեղափոխական սահմանադրական յղացման ծագումը առաջին անգամ Միր-Հաշիմից սկիզբն առաւ. նա էր առաջին պրօպագանդիստը և դրդողը. նա էր ամենածայրայեղ ձախակողմեանը՝ մինչև Մամադ-Ալի-շահի թագաւորութեան առաջին կիսամեակը. Աթաբէկի սպանվելու օրից նա ինչու փոխվեց և եղաւ խաղաղ-վերանորոգչական. իսկ այժմ, երբ երդմնադրում շահը ոտքակոխել է մէջլիսը, բանտակել մեր նշանաւոր ներկայացուցիչներին և սպանել սահմանադրութիւնը՝ ինչու է ցրել այս յայտարարութիւնը և անպատուել մեր անջումաններն ու բարեկամական հուշակել մեզ... Հետևաբար, երբ ամեն տեղ համարեա դադարել է յեղափոխութիւնը և փակվել ժողովարանները, այստեղ էլ շահը Միր-Հաշիմի գործակցութեամբ ուզում է խեղդել մեր փայփայած և արեան զոհերով գնած սահմանադրութիւնը, որպէսզի տիրապետ նախկին բէժիմը և մեզ նորից քարշ տայ դէպի միապետական սպանդանոցը. ուրեմն թող կորչի շահը և իր միապետական բէժիմը. թող կորչի Միր-Հաշիմը, Միրզա-Հասան մուշտեհիդը և նրանց «Իսլամէն». կեցցէ սահմանադրութիւն և ազատ Ատրբէյջանը»։ Տասնեակ հազարաւոր ամբոխի «կորչինները» և «կեցցէները» թնդացրին օդը, և ժողովուրդը դիմեց զէնքի...

Յունիսի 12-ին, ինչպէս ասում են, դիպլօմատական յարաբերութիւնները միանգամայն խզվում են Միր-Հաշիմականների և անջումանկանների միջև և յայտարարվում է կռիւ։ 13-ին սկսվում է առաջին կռիւը, Միր-Հաշիմականները Դաւաչուց և Սուրխաբից, իսկ անջումանկանները՝ Խարանից և Ամիր-Խիզից։

Միապետական կուսակցների հրամանատարն էին Սուջայ-Նիզամը և Զառդաշ-Լաշկարը, միացած այդ թաղերի յայտնի պարագլուխների հետ, իսկ սահմանադրականների պարագլուխները այն օրերում մեզ անյայտ էին, չէինք ճանաչում. երևում էր, որ այդ սկզբնական կռիւներում սահմանադրականները կռւում էին առանց պաշտօնական ղեկավարների և խառնիխուռն, առանց մի որևէ տարրական դիսցիպլինայի. ում մօտ զէնք կար՝ շտապում էր առաջ, ըստ կամաց արձակում ուր ուզում էր. այնպէս որ 13 օրվայ ընթացքում ութն անգամ յարձակվում են միմեանց վրա և ամեն անգամ հազարաւոր փամփուշտներ կրակում։ Այդ ութ օրվայ կռիւների լուրը իսկոյն տարածվում է Թաւրիզի շրջակայքը և ամեն կողմից ներս են խուժում բաղդախնդիր ասպատակներ ու, մի որևէ աւարի, որսի համար, միանում այս կամ այն կողմերին, որպէսզի աւարից կարողանան օգտվել... Այդ շրջանում աջողութիւնը միշտ թեքվում էր միապետականների կողմը, այնպէս որ նրանց աջողվեց աւարել Խարանի բազարը և մի քանի հարուստ մագազիններ։ Ժողովուրդը սկսեց սարսափել և քաղաքի ծայրամասերի բնակիչները խմբվեցին կենտրօնական թաղերը, շատերը տնով տեղով փոխադրվեցին հայոց թաղերը և ապաստանեցին հայերի տներում։ Թեմակալ առաջնորդը այդ մասին յայտարարեց, որ բոլոր դիմողներին ընդունեն և հիւրերին արժանավայել պատիւ տան։ Այդ 13 օրվայ մէջ հինգ անգամ առաջ եկան հաշտութեան միջնորդներ և միշտ մերժվեցին դաւաչիների կողմից։ Դրութիւնը քանի գնում՝ բարդվում էր. սահմանադրականների կողմից նկատվում էր յուսահատութիւն և լքում, այնպէս որ յունիսի 26-ի օրը միապետականները՝ բաժանված երկու ուժեղ խմբերի՝ գրոհ տուեցին մէկը դէպի «Մախսուդիէ» անջումանի և միւսը Արքի վրա. այդ առաջխաղացութեան լուրը կայծակի արագութեամբ տարածվում է ամբողջ սահմանադրական թաղերում, և բոլորն էլ սոսկալի երկիւղի մէջ բարձրացնում են սպիտակ դրօշակներ ի նշան անձնատուութեան... Եւ հէնց այն էր, մի կէս ժամից յետոյ պիտի աւերակ դառնար անջումանը «Մախսուդիէն», դրաւվէր Արքը և ընդ միշտ մեռնէր սահմանադրութիւնը ամբողջ Պարսկաստանում, երբ անակնկալ կերպով օգնութեան է հասնում մէկը, որին վիճակված էր ապագայում հերոսի պատիւն արժանանալ։

Այդ մէկը Սաթթար խանն էր։

V

Սաթթար-խանի լրիւ կենսագրութիւնը չունենք մեր ձեռքի տակ։ Որպէս մի սոսկ մարդով՝ մինչև օրս ոչ մի բանասէր չէ հետաքրքրվել նրանով, և ոչ ոքի մտքից չէր կարող անցնել, որ մի օր նրա կենսագրութիւնը անհրաժեշտ կը լինի տպագրութեան տալ։ Այդ իսկ նպատակով մենք մի անգամ ներկայացանք նրան, գտնէ նրա կեանքի գլխաւոր դէպքերը իր բերանից լսելու. բայց տեսնելով մեծ մարտիկի չափազանց զրաղմունքը և մի ըսպէ անգամ դադար չունենալը՝ ակամայից հրաժարվել ենք այդ ձանձրոյթը պատճառել և հեռացել ենք, թողնելով այդ՝ մի աւելի բարեպատեհ ժամանակի։ Բայց միշտ հետևելով և տարբերից օգտվելով՝ կողմնակի մարդկանցից քաղել ենք հետևեալ ցամաք և ոչ գոհացուցիչ տեղեկութիւնները։

Նրա հայրը, Սմայիլ Կարադաղլին, տեղական խաների հետ ընդհարվելով 90-ական թուականներին, թողնում է Ղարադաղը և ընտանիքով հեռանում, գալիս Թաւրիզ և բնակութիւն հաստատում։ Այդ ժամանակ իր անդրանիկ որդին՝ Սաթթարը՝ մօտ 16 տարեկան պատանի էր (այժմ 36—37 տարեկան է)։

Սմայիլ Կարադաղլու մասին տեղացիք և ծանօթները շատ պատկառանքով են յիշում նրա քաջագործութիւնները և «մեարդ»-ութիւնը. նրա յանդգնութիւնը այն աստիճանի է հասնում, որ ընդհարում է ունենում և կառավարութեան հետ, այնպէս որ տեղական կառավարութիւնը յանձին գեներալ Ամիր-Նիզամի՝ ամիսներով հետամուտ լինելով մեծ ջանքերից և զոհերից յետոյ կարողանում է բռնել ըմբոստ Սմայիլին և որոշում է թնդանօթի կապել. բայց Սմայիլը ունէր անկեղծ և հաւուստ բարեկամներ, որոնք ափսոսալով այդ քաջին իրանց մէջ հաւաքում են 5 հազար թուման և ազատում են նրան մահից։ Պատմում են, որ 20-ամեայ Սաթթարը երդուել էր Ղուրանի վրա, որ եթէ սպանէին հօրը՝ նա վճռել էր իր անձը վտանգի դնելով հէնց իր սենեակում սրախողխող անել Ամիր-Նիզամին։

Սմայիլ Կարադաղլու մեռնելուց յետոյ՝ տան բոլոր հոգսը ընկնում է Սաթթարի վրա, որը ամենայն արժանաւորութեամբ գրաւում է հօր տեղը. Սաթթարի քաջագործութիւնները և «մեարդ»-ութիւնը դեռ բազանցում է հօրը. նա երբեմն զրաղվում էր և աւազակութեամբ՝ միշտ յօգուտ տանջվող և կեղեքվող տարրի (?)։

Պատմում են մի դէպք, որը բնորոշում է նրան։ Մի անգամ Սաթթարը վերադառնալով Քեալբալեալից մի տեղ նկատում է մի ամբողջ կարաւան լացի և կոծի մէջ ողբալիս. հարցնում է պատճառը և իմանում, որ այդ կողմերի յայտնի աւազակապետ

տեղեկութիւնների համեմատ, թիւրքերը այդ պատասխանի մէջ կը խնդրեն որոշել «սուլթանի գերագոյն իրաւունքը» նախադասութիւնը, ապա ցանկութիւն կը յայտնվի մի պահականաւ ուղարկել Սուդայի ծովածոցը և կը շեշտվի, որ անհրաժեշտ է, որ պետութիւնները դիտաւորութիւն յայտնեն անյողդողդ պահպանել սուլթանի գերիշխանութիւնը կղզու վրա։ (Հ. Գ.)

—

Կ.-Պոլիս, 4 յուլիսի

Նախկին դեսպան Զինովիէվը շոգենաւով ճանապարհ ընկաւ Օդեսա։ Նրան ճանապարհ գցեցին սուլթանի, մեծ-վէզիրի, տիեզերական պատրիարքի, դեսպանութիւնների, միսսիոնների ներկայացուցիչները, արտաքին գործերի մինիստր Ռիֆաաթ-փաշան, զօրքերի գլխաւոր հրամանատար Մահմուդ-Շէվքէթ-փաշան և ռուսական կօլոնիան։ (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍԱՐԱՑԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐՈՒՄ

I

Ես նորից կատարեցի մի ճանապարհորդութիւն դէպի Ղարաբիլիսա, որտեղ այս ամառ բացված են ձրի դասընթացքներ գիւղատնտեսութեան մի քանի ճիւղերից։

Դասընթացքները մի կենդանի հաճախելի գործի կերպարանք են ստացել։ Ուսանողների թիւը անցել է 30-ից։ Նրանց մեծագոյն մասը կազմում են ուսուցիչներ և վարժուհիներ, որոնք եկել են զանազան կողմերից, այնուհետև մի քանի ուսանողուհիներ. և մասնաւոր խնդրելիգնտ անձեր։

Վարժուհիներից մէկը կրթված թրքուհի է։ Կան նոյնպէս ռուսներ Հիւսիսային Կովկասից և Անդրկովկասի մի քանի տեղերից։

Մենք գնացել էինք մի քանի հոգով կարդալու դասախօսութիւններ դասընթացքների աշակերտների համար կիրակի և երկուշաբթի օրերը՝ յուլիսի 5-ին և 6-ին։

Առաջին դասախօսութիւնը կարդացի ես։ Դասախօսութիւնը պարունակում էր իր մէջ քննութիւն այն բոլոր պայմանների, որոնք ազդում են տեղական անասնապահութեան զարգացման վրա։

Երկրորդ դասախօսութիւնը պատկանում էր Ա. Աթանասեանցին, որ կարդաց երկրագործական խնդիրների նշանակութեան մասին։

Երրորդ դասախօսութիւնը մի գործնական զրոյց էր մեղուաբուծութիւնից, որը կատարեց Ա. Բարխուդարեան տեղական աչքի ընկնող մեղուանոցներից մէկում (Ա. Աղաբաբանի մօտ)։

Այդ դասախօսութիւնից յետոյ տեղի ունեցաւ իմ երկրորդ դասախօսութիւնը «կիրակի և ջրի ազդեցութիւնը կաթի յատկութեան վրա»։

Դրանով վերջացան մեր առաջին օրվայ պարապմունքները։

Ա. Քալանթար

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Թալին (Էջմ. գաւ.), 2 յուլիսի

Թալինի շրջանը գտնվում է խաւարի մթնոլորտում. այս շրջանից բացակայում է դպրոցը, գր.-ընթ.։ Այս բոլորի չը լինելու հետ թերևս կարելի լինէր հաշվել, եթէ մի գիւղշէր և մի փոքր գեղատուն լինէր, որոնց կարիքը խիստ զգալի է։

Գիւղացիներից շատերը մեռնում են ամենահասարակ հիւանդութիւնից հէնց նրա համար միայն, որ նրանց բժշկողն է գիւղական «զալլաքն» ու «հէքիմը»։ Թալինի շրջանը, եթէ հաշուի առնենք նաև հարևան քիւրդերին, բաղկացած է 80 գիւղից։ Դեռատուն և ֆելդշէր ունենալու պարտականութիւնը, երիտասարդ ոյժերի բացակայութեան շնորհիւ, ընկնում է տեղական քահանաների, հասարակութեան տանուտէրի և պրիստաւի վրա, բայց ցաւալին այս է, որ շրջանիս քահանաները, փոքր բացառութեամբ, տգէտ են և աւելի շուտ կաշխատեն խոչընդոտ հանդիսանալ այս գործին, փոխանակ առաջ տանելու. հասարակութեան տանուտէրը նոյնպէս անփոյթ է. այնպէս որ մնում է սպասել պրիստաւից այս հարցի իրագործումը։ Թալինի շրջանի ամբողջ ժողովուրդը յարգում է պրիստաւին, որպէս անկաշառակեր և իր պարտականութիւնները անթերի կատարող մի անձի։ այս երևոյթի վրա ենք հրաւիրում Թալինի 4-րդ մասի պրիստաւի ուշադրութիւնը։

Զեփիւռ

—

Կիսլովոդսկ, 3 յուլիսի

Այս տարի այստեղ համեմատաբար շատ փոքր է եկող հայերի թիւը, մանաւանդ Բագուից։ Նախորդ տարիներն այստեղ եկող հայերը մեծ մասամբ բագուեցիներ էին։ Ներկայումս բագուեցիները սկսել են այլևս Կովկասի ուրիշ վայրերը գնալ ամարանոց։

Գ. Օվանէսեան

—

Ուզունթալա (Ղազախի գ.), 2 յուլ.

Մեզ մօտ առատ հունձ է. կարող եմ ասել, որ մի քանի գիւղերում աշնանացանը հնձված, վերցված է. սկսվում է գարնան հունձը։ Գիւղացին ուրախ է. անց 7 տարի է, որ նա բերք չէ տեսել, անասունը ծախել-կերել է, իսկ այս մարտից մինչև հունձը կերակրվում էր փիփերտով և բանջարեղէնով։

Մենք ունենք բերրի հողեր, բայց մեր գիւղացին միայն գիտէ ցորեն, գարի, կորեկ, կարտոֆել և լօբի ցանել։ Կարելի է պարապել շերամապահութեամբ և արդէն աղող փորձեր են եղել։

Թաղդի չը տեսնված բերք է խոստանում։

Մեր գիւղը, 300 ծխից, ունի երկու եկեղեցի և մէկ ծեր քահանայ, որ հովւում է և հարևան Լալա գիւղը։

Ժողովուրդը զրկված է ուսումնարանից ազգասութեան պատճառով։ հրաւիրում ենք Կ. Հ. Բար. Ընկ. խորհրդի ուշադրութիւնը։

Մոռացայ յիշել, որ մեր գիւղը ամարանոցի տեղ է ծառայում, գալիս են Բագուից, Գանձակից, Թիֆլիսից և Ղազախից։

Եսայ Տէր-Հովհ.

—

Սղնախ, 5 յուլիսի

Յուլիսի 1-ին կայացաւ մեր քաղ. իրաւասունների անդրանիկ ժողովը։ Քարաուղարի կարդացած արձանագրութիւնից երևաց, որ այս տարի դուման ոչ մի ժողով չէ ունեցել, ուստի այս նիստը համարվեց առաջին։

Սահմանվեց սակագին մսի և հացի վրա։ Ոչխարի մսի ֆունտը 11 կ., տաւարինը՝ 9 կ., հացի ֆունտը 1-ին տեսակի 5 կ., 2-րդ տեսակի 3 կ.։ Վճռվեցին մի քանի ոչ էական հարցեր ևս։

Զանաւորների մի խումբ յայտարարութիւն էր տուել, որ յուլիսի 9-ին կայանալիք ժողովի մէջ կատարել նախագահի ընտրութիւնը, համաձայն քաղ. կանոն. 120-դ յօդուածի, քաղաքագլխի և նրա օգնականի ոռճիկները նշանակելու համար, այլև ընտրեն վերատուգող յանձնաժողով քաղ. վարչութեան չորս տարվայ հաշիւները քննելու համար։ Այս հարցի մասին բարձրացաւ աղմուկ։

N. N.

ԽՕՍԵՐ Ա.

Պետերբուրգ, 4 յուլիսի.—Օր ու գիշերվայ ընթացքում մայրաքաղաքում խօսերայից հիւանդացան 101, մեռան 31, առողջացան 51, հիւանդներ կան 876 հոգի։

Արխանգէլսկ.—Խօսերայից հիւանդացան 8, մեռան 10 հոգի։

Տվէր, 5 յուլիսի.—Խօսերայով հիւանդացան 2, մեռան 2 հոգի։

Արխանգէլսկ.— Կէմսկի գաւառում խօսերայից հիւանդացան 6, մեռան 5 հոգի։

Ռիգա.—Ռիգայի գաւառում խօսերայով հիւանդացաւ մի բանւոր։

Պետերբուրգ.—Օր ու գիշերվայ ընթացքում մայրաքաղաքում խօսերայից հիւանդացան 81, մեռան 40, առողջացան 49, մնում են հիւանդներ 868 հոգի։

Պետերբուրգ, 6 յուլիսի.—Օր ու գիշերվայ ընթացքում մայրաքաղաքում խօսերայից հիւանդացան 68, մեռան 36, առողջացան 38, մնացել են հիւանդներ 852 հոգի։

Պետերբուրգ. — Վիտէբսկի, Կուրլիանդսկի և Օլոնէցկի նահանգները խօսերա տարածվելու վտանգի են ենթարկված։

Պետերբուրգ.—Արխանգէլսկում խօսերայից հիւանդացան 8, մեռան 6, Արխանգէլի գաւառում հիւանդացան 6, մեռան 2 հոգի։ Պօլօցկում հիւանդացան 4. Ռիգայում հիւանդացան 4, մեռան 2 հոգի։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Էջմիածնից Թիֆլիս վերադարձան Թիֆլիսի թեմի առաջնորդ Գալեգին արքեպիսկոպոսը, Ղարաբաղի թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոսը և Կ. Պոլսի ազգային երեսփոխանական ժողովի ատենապետ Մինաս Չերազ։

◆ Յուլիսի 5-ին, կիրակի օր, երեկոյեան գնացքով Մինաս Չերազ ուղևորվեց Բաթում, Կ. Պոլիս մեկնելու համար։ Ոգջերթ ժողովելու համար կայարան էին գնացել «Մշակի» խմբագրութեան անդամները։

◆ Յուլիսի 5-ին, մօտաւորապէս գիշերվայ ժամը 12-ին վրաց ազնուականութեան թատրոնի ամարային այգում բանտային կոմիտէի օգտին կազմակերպված զբօսանքի ժամանակ՝ բուֆետում տեղանի մօտ նստած «Закавказье» թերթի խմբագիր իշ. Ամիրաջիբին տեսնելով, որ «Тифл. Лист.» լրագրի խմբագիր Քրիստափոր Աճառեանը էլ եկաւ ու տիկ. Օրլովսկայի և նրա հօր՝ իշխ. Միքելաձէի հետ միասին նստեց մի ուրիշ սեղանի մօտ, սկսեց վրացերէն լեզուով վիրաւորանքներ ուղղել նրանց, այն ժամանակ իշխ. Միքելաձէն պահանջեց, որ իշխ. Ամիրաջիբին հանգիստ թողնի նրանց։ Վերջինիս պաշտպան դուրս եկան երդ.-հաւատարմատարի օգնական Ծերեթելին և պաշտօնեայ իշխ. Միխայիլ Ճավճաւաձէն, որոնք բղաւում էին. «Դուրս Աճառուրով իր դամայի հետ միասին»։ Այդ բանից վրդովված՝ Օրլովսկայան երկու ապտակ տուեց Ծերեթելիին, իսկ իշխ. Ճավճաւաձէն [illegible] ։ Ապա՝ արդէն մօտաւորապէս գիշերվայ ժամը 3-ին, Լ. Ծերեթելիի խմբից բաժանվեց պահեստ մէջ գտնվող Տերեքեան զօրքերի սօտնիկ Մամուկ իշխ. Օրբելեանին և մօտենալով Աճառուրովին՝ խնդրից նրան «երկու խօսքով բացատրվելու համար» մի կողմ անցնել։ Վերջինս ոչինչ չը կասկածելով՝ գնաց իշխ. Օրբելեանի հետ դէպի մօտակայ տաղաւարը, իբրև աւելի խուլ տեղ, ուր իշխ. Օրբելեանին, առանց մի խօսք ասելու, երկու անգամ ապտակում է Աճառուրովին, վերջինս էլ պատասխանում է նոյն ձևով։ Այն ժամանակ Օրբելեանին բռնում է նրա կոկորդից և սեղմում։ Օրբելեանիին օգնութեան են հասնում ուսանող Կանչելին, Լ. Ծերեթելին և իշխ. Մակայիվը ու սկսում հարուածներ թափել Աճառուրովի մէջքին, ուսերին։ Կուռղներին իսկոյն բաժանում են և կարգը վերականգնում։ Առաջ բերելով ներկայ միջադէպի մանրամասնութիւնը պաշտօնական տեղեկութեան հիման վրա, չենք կարող չը ցաւել, որ զրական-հրապարակախօսական պայքարը լուծվում է մի այդպիսի վայրենի զէնքով։ Բոլոր սրտով մենք բողոքում ենք հաշտեցութեան այդ անարգ ձևի դէմ։ Եւ առաւել զրական դասի մարդկանց շրջանում, որոնք հասարակական կարծիքը ղեկավարելու ու բարքերը կրթելու յաւակնութեամբ են հանդէս գալիս, պէտք է վտարված լինի այդ տեսակ բռնի գործելակերպը։ Հաւատացած ենք միանգամայն, որ ներկայ տխուր միջադէպը մասնաւոր բնաւորութիւն կրող թիւրիմացութիւնների արդիւնք լինելով՝ հեռաւոր անգամ առնչութիւն ունենալ չէ կարող ազգային յարաբերութիւնների հետ և ապա ուրեմն փքուն մեկնութիւններ չի ստանայ հասարակութեան խաւերում։

◆ Պարէզից տեղեկութիւն է ստացված, որ Թիֆլիսի քաղաքագլուխ իշխ. Վ. Ն. Զերքէզովը աջողութեամբ ենթարկվել է օպերացիայի։

◆ Ստացանք՝ Ռ. Խան-Ազատ և Գ. Վարդանեան «Հայաստանի պատմութիւն» 27 պատկերով և մի մեծ դունաւոր քարտէզով, IV-րդ բաժ. դասընթացքի և ժողովրդ. ընթերցանութեան համար։ գինն է 75 կ., Թիֆլիս, 1909 թ., 184 էջ։

◆ Ստացել ենք «Կաթիլներից գոյացող լճերը» (սպառող. ընկ. մասին) բրոշիւրը, Կ. Սուզդալցեվի, փոխադրութիւն Միքայէլի, Բաքու, 23 եր., գինն է 5 կ.։

◆ Հոյս տեսաւ վրացերէն լեզուով հրատարակվող մանկական «Զէջիլի» պատկերազարդ ամսագրերի № 6-րդը։

◆ Պետերբուրգի կօնսերվատօրիան աւարտած Զ. Մ. Կոսմինինը կազմակերպել է 40 հոգուց բաղկացած երկսեռ մի խումբ ռուս-մաքրօսական համերգներ տալու, օպերաներում և օպերետներում մասնակցելու նպատակով։ Այդ խումբը սովորում է նաև հայկական ու վրացական ժողովրդական երգեր։

◆ Յուլիսի 4-ին ոստիկանութիւնը զինուորական պահակների հետ միասին շուրջկալ կատարելով Աւճալսկայա, Լիտերանսկայա, Անդրէեվսկայա և Ֆէօդորովսկայա փողոցներում կալանաւորել է 30 հոգի անցագիր չունեցողներ. 21 հոգի էլ կալանաւորվել են յուլիսի 5-ին 8-րդ ոստիկանամասում, Ֆեսկովսկայա փողոցում շուրջկալի ժամանակ։

◆ Վրաց ազնուականութեան պարտէզում առաջիկայ կիրակի օրը, յուլիսի 12-ին, տեղի է ունենալու զբօսանք։ Զբօսանքի ժամանակ նուագելու է զինուորական նուագախումբը, նոյնպէս և լարային գործիքների օրկեստրը։

◆ Յուլիսի 4-ին, երեկոյեան ժամը 9-ին Գոլովինսկում, Արխիտեկտ թատրոնի էլեկտրաքարշը մեծ ուժով ընդհարվեց կանգնած № 17 էլեկտրաքարշին, որից փշրվեցին ապակիները և ջարդուածքներ ստացան վաճառական Իվան Բօվիմսկին, կօնտրոլիոր Բահիմ Բաբայեվը և մէջը նստողներից մէկը՝ Դաւիդ Բերեզաշվիլին։ Վիրաւորներին բժշկական օգնութիւն ցոյց տրվեց։

◆ Յուլիսի 4-ին, ցերեկվայ ժամը 12-ին Գոլովինսկի պրոսպէկտում № 19 տան մէջ ապրող ուսուցիչ Պետերսօնի աղջիկը սխալմամբ թէյի գդալով նաշադիրի սպիրտ ընդունելով թունաւորվել է։ Նրան խիստ ուղարկել են Միքայէլեան հիւանդանոց։ Կեանքը զերծ է վտանգից։

◆ Առաջիկայ շաբաթ օր, յուլիսի 11-ին։ Մեծ-Ղարաքիլիսայում տեղի կունենայ մի երեկոյթ-զբօսանք տեղական ջուլհակութեան արհեստի զարգացման օգտին։ Երեկոյթը բաղկացած կը լինի ներկայացումից և պարահանդէսից։ Ներկայացման կազմակերպութիւնը իրանց վրա են վերցրել Աղայեան, Ղազարեան և Աբրահամեան։ Կը ներկայացվեն հայերէն լեզուով «Մի կնոջ տանջանքը» և ռուսերէն «Վարձու կին» պիէսները։

◆ Յուլիսի 4-ին, երեկոյեան ժամը 11-ին Թիֆլիսի ընակիչ Նիկոլայ Դերբենովը Մուխրանեան կամուրջին մօտիկ իրան նետել է Կուր գետը և խեղդվել։ Դիակը յաջորդ օրը գտել են Նաւթլուղի մօտերքում և ուղարկել Միքայէլեան հիւանդանոց։ Դերբենովը առաջ վարում էր գործակատարի պաշտօն, որից և վերջերս հեռացրել էին։

◆ Քաղաքապահ Սարգիս Աճառեանցը յուլիսի 5-ին, ցերեկվայ ժամը 12-ին, երբ անցնելիս է լինում ս. Կարապետի եկեղեցու մօտից, ինչ որ անայտ մարդիկ քարերով սկսում են հարուածել նրան։ Աճառեանցը ներս է վազում եկեղեցու գաւթում գտնվող իր բնակարանը և ատրճանակը վերցնելով դալիս է կրակում օդում։ Անծանօթները սկսում են փախչել։ Աճառեանցը պահանջում է կանգնել և, երբ նրանք չեն կանգնում, մի քանի անգամ կրակում է ու վիրաւորում մէկին։ Վերջինիս ուղարկել են հիւանդանոց, իսկ միւսները փախել են։

◆ Թիֆլիսի նահանգական դատարանի առաջին քրէական բաժանմունքը յուլիսի 5-ին ուղևորվել է Սուրամ։

◆ Յուլիսի 5-ին Պուշկինսկայա փողոցում 5-րդ քաղաքամասի ոստիկանութիւնը կալանաւորել է Թիֆլիսի բնակիչ Արտէմ Պետրոսովին, որը աքսորված լինելով Թիֆլիսի նահանգապետութեան սահմաններից՝ ինքնակամ կերպով վերադարձել էր։

◆ Թիֆլիսի առողջապահական-բժշկական խորհուրդը կազմել է 1910 թւի քաղաքային հիւանդանոցների, բուժարանների ու առողջապահական-բժշկական հաստատութիւնների ծախքերի նախահաշիւը, որը, ինչպէս ասում են, մի քանի տասնեակ հազար ռուբլիներով աւելի է նախկին տարիների համեմատութեամբ։

◆ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՕԼԻՑ մեզ գրում են, որ «Շերակի արտերը այս տարի կատարեալ առատութիւն են խոստանում։ Մարդ փաստաւորվում է, երբ անցնում է դաշտերով։ Եթէ մի անձրև, միայն մի անձրև էլ գայ, այնուհետև կատարեալ առատութիւն կը լինի։ Ափսոս որ այս տարի քիչ են ցանել»։

ԼՈՒՐԵՐ ԷՋՄԻԱԾՆԻՑ

—

◆ Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթէոս II մի ամբողջ շաբաթ մնաց Էջմիածնում և ամսիս 6-ին ուղևորվեց Բիւրականի ամարանոցը, քանի որ Էջմիածնում տիրող սաստիկ տօթը անհնարին է դարձնում ապրելը։

◆ Ամբողջ շաբաթվայ ընթացքում Կաթողիկոսը զբաղված էր գործերի ուսումնասիրութեամբ։ Ամենից առաջ նա պահանջեց, որ սինոդը ներկայացնէ իրան Ռուսաստանում գտնված բոլոր Էջմիածնական և վանքապատկան կալուածների, նրանց եկամուտների և ծախսերի, Էջմիածնում գոյութիւն ունեցող հաստատութիւնների, վեհարանի գոյքի և կարասիների մանրամասն ցուցակները, որպէսզի յայտնի լինի, թէ ինչ է յանձնվում իրան և ինչ դրութեան մէջ են եղել գործերը իր մտած օրը։

◆ Էջմիածնի ամբողջ միաբանութիւնը ներկայացաւ Կաթողիկոսին։ Նորին Վեհափառութիւնը մի երկար ճառ խօսեց, ցոյց տալով թէ ինչ պարտականութիւններ են ծանրանում եպիսկոպոսների, վարդապետների, առաջնորդների, միաբանների վրա, թէ ինչպէս պէտք է ըմբռնէ ամեն նրա սրտին շատ մօտ էր, որովհետև ամենայն թափով մանելով յեղափոխական գործի մէջ՝ կարճ միջոցում իր թաղը ոտի կանգնցրեց, զինեց և անջումանից կարգվեց իր թաղի զեկավարը, սարքաբադան։

Նախորդ գլխի մէջ յիշածս 500 ձիաւորի սարքաբադան Սաթթար-խանն էր, որ որպէս առաջնութեաց խումբ գնացել են Վասպուրական թէհրանի վրա արշաւելու համար, բայց քաղաքում պատահած միջադէպը անջումանին հարկադրեց յետ կանչել այդ քաջին։ Եւ ահա, ինչպէս ասացի, երբ վրա հասաւ այդ կրիտիկական րոպէն, երբ ամբողջ քաղաքը բարձրացնելով սպիտակ դրօշակ՝ անձնատուր էր եղել և երբ կառավարականները մի կէս ժամից յետոյ պիտի հինայատակ անէին անջումանը և գրաւէին Արքը, ահա այդ ճգնաժամի մէջ վրա հասաւ Սաթթար խանը ընդամենը 18 ձիաւորով։

Նա այնպիսի մի յարձակում գործեց կառավարականների այն մասերի վրա, որոնք ուզում էին գրաւել և աւերել անջումանը, որ յանկարծակիի գալով ջնջեցին ու քարացան. միայն 10 րօպէի մէջ արձակվեցին հարիւրաւոր փամփուշտներ Մօսինի ու Մաուզերի հրացաններից. սպանեցին 8—10 հոգի, վիրաւորելով մօտ 20։ Միապետականները սկսեցին յետ նահանջել և փախուստ տալ... Սաթթար-խանը տեսնելով այդ՝ միայն երեք հրացանաւոր թողնելով անջումանի կարում պատուիրեց անընդհատ հրացան արձակել դէպի փախստականները և ինքը 15 ձիաւորով գրոհ տուեց դէպի Արքը և սկսեց կարկուտի նման գնդակներ թափել կառավարականների այդ մասի վրա. ինչ տեղ քշել են մի քանի ձի, եղ կամ ոչխար. առանց սպասելու մի որևէ օգնականի՝ նոյն իսկ առանց սպասելու, որ իր ձին թամբեն, կառնէր հրացանը և իրան ձգելով մերկ ձիու վրա՝ կը սլանար դէպի վերանգված տեղը և մի ժամից յետոյ կը վերադառնար աւարը յետ խլած, չարագործներին հալածած և երբեմն նոյն իսկ նրանցից աւելորդ բաներ խլած, որը մի քանի օրից յետոյ դարձեալ յետ կը տար իրանց»։

«Զափազանց ողորմած է և խեղճ, անօգնականի դառը պաշտպանող. նա վաշխառուի, կեղեքողի և զուլումքեարի սոսկալի թշնամին էր. «Եթէ դրանց յանձնեն ինձ,—յաճախ կասէր նա,—բոլորին մի օրում կը կոտորեմ. դրանք խիղճ, Աստուած չունեն. դրանք քեաֆիրներ են»։ Մեզ հետ շատ լաւ էր, միասին կը նստէինք, կուտէինք և կը խմէինք ոգելից խմիչքներ. նրա մէջ չէինք նկատել թուրքական որոշ հակումներ»։ Ահա և ակնատեսների վկայութիւնը, որից որոշ չափով պարզվում է, որ Սաթթար խանի մէջ հէնց սկզբից կառավարելու շնորհք կար։

Սաթթար խանը ընդհարվեց Աղիլ խանի հետ այն պատճառով, որ տեսնում էր այդ մարդու մէջ բռնակալութեան և վաշխառութեան հակումներ, այնպէս որ մի օր թքելով հեռացաւ նրա ծառայութիւնից։ Վերջերս նա զրաղվել էր ձիավաճառութեամբ։

Երբ Թաւրիզում առաջին անգամ բռնկվեց յեղափոխութիւնը, առաջին «ֆեդային» Սաթթար խանն էր իր 10—12 հոգի խմբով, որոնք իր մօտ աղգականներն ու բարեկամներն էին։ Այդ գործը, ինչպէս երևաց, ձիաւորների մի խումբ. բայց Սաթթարը մերժելով վերցնում է իր հաւատարիմ ընկերները և անցնելով դէպի Արդաբիլ Բէլօսուարի շրջակայքում ամենայն աջողութեամբ բռնում է ըմբոստին և բերում Թաւրիզ։ Այդտեղ թագաժառանգը «ֆիրերին» է ասում և տալիս «խան» տիտղոսը։

Այդ ժամանակ նա Արդաբելում ծանօթանում է յայտնի աշիրաթա Արդալի Մամադ-Ղուլի խանի հետ և եղբայրանում ու պայմանաւորվում միշտ օգնել միմեանց։ Այդ լինում է 10 տարի սրանից առաջ, 1898 թւականին, երբ նա 26—27 տարեկան էր և ընակվում էր Թաւրիզի Ամիր-Խիզ թաղում։

Ռուսահպատակ կալուածատէր Ադիլ-խանը վերջերս գնելով Մուժամբար հայաբնակ գիւղը՝ ցանկանում է ունենալ մի կարճ մարդ, որպէսզի քաջութիւն ունենայ դիմադրելու արտաքին աշիրեթային յարձակումներին և պաշտպանելով գիւղը՝ լինի նրա կառավարիչը։ Ադիլ-խանը լսելով Սաթթար-խանի հռչակը՝ մի կերպ գրաւում է նրան և լիազօրութիւն տալիս գիւղը կառավարելու, և սա 3 տարի կառավարում է գիւղը ամենայն հմտութեամբ և գոհունակութիւն պատճառում տեղական բոլոր հայերին։

Նոյն գիւղացիները այժմ այստեղ պատմում են, որ եթէ լաւ օր տեսել է Մուժամբարը, այդ էլ Սաթթար-խանի օրոք էր։ «Զարմանալի բիսկ և յանդգնութիւն կար այս մարդու մէջ,—պատմում են ականատեսները.—բաւական էր, որ մի թեթև ձայն դուրս գար, որ այս-ինչ հանդում երևացել են հարևան թուրքեր կամ զարադաղցի էլաթներ, որ ուզիղ մարդիկ չեն երևում, կամ այս-մանրամասնութիւնը պաշտօնական տեղեկութեան հիման վրա, չենք կարող չը ցաւել, որ զրական-հրապարակախօսական պայքարը լուծվում է մի այդպիսի վայրենի զէնքով։ Բոլոր սրտով մենք բողոքում ենք հաշտեցութեան այդ անարգ ձևի դէմ։ Եւ առաւել զրական դասի մարդկանց շրջանում, որոնք հասարակական կարծիքը ղեկավարելու ու բարքերը կրթելու յաւակնութեամբ են հանդէս գալիս, պէտք է վտարված լինի այդ տեսակ բռնի գործելակերպը։ Հաւատացած ենք միանգամայն, որ ներկայ տխուր միջադէպը մասնաւոր բնաւորութիւն կրող թիւրիմացութիւնների արդիւնք լինելով՝ հեռաւոր անգամ առնչութիւն ունենալ չէ կարող ազգային յարաբերութիւնների հետ և ապա ուրեմն փքուն մեկնութիւններ չի ստանայ հասարակութեան խաւերում։

◆ Պարէզից տեղեկութիւն է ստացված, որ Թիֆլիսի քաղաքագլուխ իշխ. Վ. Ն. Զերքէզովը աջողութեամբ ենթարկվել է օպերացիայի։

◆ Ստացանք՝ Ռ. Խան-Ազատ և Գ. Վարդանեան «Հայաստանի պատմութիւն» 27 պատկերով և մի մեծ դունաւոր քարտէզով, IV-րդ բաժ. դասընթացքի և ժողովրդ. ընթերցանութեան համար։ գինն է 75 կ., Թիֆլիս, 1909 թ., 184 էջ։

◆ Ստացել ենք «Կաթիլներից գոյացող լճերը» (սպառող. ընկ. մասին) բրոշիւրը, Կ. Սուզդալցեվի, փոխադրութիւն Միքայէլի, Բաքու, 23 եր., գինն է 5 կ.։

◆ Հոյս տեսաւ վրացերէն լեզուով հրատարակվող մանկական «Զէջիլի» պատկերազարդ ամսագրերի № 6-րդը։

◆ Պետերբուրգի կօնսերվատօրիան աւարտած Զ. Մ. Կոսմինինը կազմակերպել է 40 հոգուց բաղկացած երկսեռ մի խումբ ռուս-մաքրօսական համերգներ տալու, օպերաներում և օպերետներում մասնակցելու նպատակով։ Այդ խումբը սովորում է նաև հայկական ու վրացական ժողովրդական երգեր։

◆ Յուլիսի 4-ին ոստիկանութիւնը զինուորական պահակների հետ միասին շուրջկալ կատարելով Աւճալսկայա, Լիտերանսկայա, Անդրէեվսկայա և Ֆէօդորովսկայա փողոցներում կալանաւորել է 30 հոգի անցագիր չունեցողներ. 21 հոգի էլ կալանաւորվել են յուլիսի 5-ին 8-րդ ոստիկանամասում, Ֆեսկովսկայա փողոցում շուրջկալի ժամանակ։

◆ Վրաց ազնուականութեան պարտէզում առաջիկայ կիրակի օրը, յուլիսի 12-ին, տեղի է ունենալու զբօսանք։ Զբօսանքի ժամանակ նուագելու է զինուորական նուագախումբը, նոյնպէս և լարային գործիքների օրկեստրը։

◆ Յուլիսի 4-ին, երեկոյեան ժամը 9-ին Գոլովինսկում, Արխիտեկտ թատրոնի էլեկտրաքարշը մեծ ուժով ընդհարվեց կանգնած № 17 էլեկտրաքարշին, որից փշրվեցին ապակիները և ջարդուածքներ ստացան վաճառական Իվան Բօվիմսկին, կօնտրոլիոր Բահիմ Բաբայեվը և մէջը նստողներից մէկը՝ Դաւիդ Բերեզաշվիլին։ Վիրաւորներին բժշկական օգնութիւն ցոյց տրվեց։

◆ Յուլիսի 4-ին, ցերեկվայ ժամը 12-ին Գոլովինսկի պրոսպէկտում № 19 տան մէջ ապրող ուսուցիչ Պետերսօնի աղջիկը սխալմամբ թէյի գդալով նաշադիրի սպիրտ ընդունելով թունաւորվել է։ Նրան խիստ ուղարկել են Միքայէլեան հիւանդանոց։ Կեանքը զերծ է վտանգից։

◆ Առաջիկայ շաբաթ օր, յուլիսի 11-ին։ Մեծ-Ղարաքիլիսայում տեղի կունենայ մի երեկոյթ-զբօսանք տեղական ջուլհակութեան արհեստի զարգացման օգտին։ Երեկոյթը բաղկացած կը լինի ներկայացումից և պարահանդէսից։ Ներկայացման կազմակերպութիւնը իրանց վրա են վերցրել Աղայեան, Ղազարեան և Աբրահամեան։ Կը ներկայացվեն հայերէն լեզուով «Մի կնոջ տանջանքը» և ռուսերէն «Վարձու կին» պիէսները։

◆ Յուլիսի 4-ին, երեկոյեան ժամը 11-ին Թիֆլիսի ընակիչ Նիկոլայ Դերբենովը Մուխրանեան կամուրջին մօտիկ իրան նետել է Կուր գետը և խեղդվել։ Դիակը յաջորդ օրը գտել են Նաւթլուղի մօտերքում և ուղարկել Միքայէլեան հիւանդանոց։ Դերբենովը առաջ վարում էր գործակատարի պաշտօն, որից և վերջերս հեռացրել էին։

◆ Քաղաքապահ Սարգիս Աճառեանցը յուլիսի 5-ին, ցերեկվայ ժամը 12-ին, երբ անցնելիս է լինում ս. Կարապետի եկեղեցու մօտից, ինչ որ անայտ մարդիկ քարերով սկսում են հարուածել նրան։ Աճառեանցը ներս է վազում եկեղեցու գաւթում գտնվող իր բնակարանը և ատրճանակը վերցնելով դալիս է կրակում օդում։ Անծանօթները սկսում են փախչել։ Աճառեանցը պահանջում է կանգնել և, երբ նրանք չեն կանգնում, մի քանի անգամ կրակում է ու վիրաւորում մէկին։ Վերջինիս ուղարկել են հիւանդանոց, իսկ միւսները փախել են։

◆ Թիֆլիսի նահանգական դատարանի առաջին քրէական բաժանմունքը յուլիսի 5-ին ուղևորվել է Սուրամ։

◆ Յուլիսի 5-ին Պուշկինսկայա փողոցում 5-րդ քաղաքամասի ոստիկանութիւնը կալանաւորել է Թիֆլիսի բնակիչ Արտէմ Պետրոսովին, որը աքսորված լինելով Թիֆլիսի նահանգապետութեան սահմաններից՝ ինքնակամ կերպով վերադարձել էր։

◆ Թիֆլիսի առողջապահական-բժշկական խորհուրդը կազմել է 1910 թւի քաղաքային հիւանդանոցների, բուժարանների ու առողջապահական-բժշկական հաստատութիւնների ծախքերի նախահաշիւը, որը, ինչպէս ասում են, մի քանի տասնեակ հազար ռուբլիներով աւելի է նախկին տարիների համեմատութեամբ։

◆ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՕԼԻՑ մեզ գրում են, որ «Շերակի արտերը այս տարի կատարեալ առատութիւն են խոստանում։ Մարդ փաստաւորվում է, երբ անցնում է դաշտերով։ Եթէ մի անձրև, միայն մի անձրև էլ գայ, այնուհետև կատարեալ առատութիւն կը լինի։ Ափսոս որ այս տարի քիչ են ցանել»։

ԼՈՒՐԵՐ ԷՋՄԻԱԾՆԻՑ

—

◆ Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթէոս II մի ամբողջ շաբաթ մնաց Էջմիածնում և ամսիս 6-ին ուղևորվեց Բիւրականի ամարանոցը, քանի որ Էջմիածնում տիրող սաստիկ տօթը անհնարին է դարձնում ապրելը։

◆ Ամբողջ շաբաթվայ ընթացքում Կաթողիկոսը զբաղված էր գործերի ուսումնասիրութեամբ։ Ամենից առաջ նա պահանջեց, որ սինոդը ներկայացնէ իրան Ռուսաստանում գտնված բոլոր Էջմիածնական և վանքապատկան կալուածների, նրանց եկամուտների և ծախսերի, Էջմիածնում գոյութիւն ունեցող հաստատութիւնների, վեհարանի գոյքի և կարասիների մանրամասն ցուցակները, որպէսզի յայտնի լինի, թէ ինչ է յանձնվում իրան և ինչ դրութեան մէջ են եղել գործերը իր մտած օրը։

◆ Էջմիածնի ամբողջ միաբանութիւնը ներկայացաւ Կաթողիկոսին։ Նորին Վեհափառութիւնը մի երկար ճառ խօսեց, ցոյց տալով թէ ինչ պարտականութիւններ են ծանրանում եպիսկոպոսների, վարդապետների, առաջնորդների, միաբանների վրա, թէ ինչպէս պէտք է ըմբռնէ ամեն

մէկն իր պաշտօնը, յորդորեց վերջ տալ երկպառակութիւններին, կուսակցական գըժտութիւններին և աշխատել եկեղեցու ու ազգի համար։

✦ Դիւանապետութեան պաշտօնի համար առայժմ իբրև յարմարագոյն կանդիդատներ նկատի կան Յուսիկ վ. Զոհրաբեան և Խոսէն վ. Մուրադբէկեան։

✦ Ճեմարանի տեսչութեան համար իբրև կանդիդատներ նկատի ունեն Ստեփան Մալխասեանին, Ագոնցին և Յ. Գասպարեանին (Լազարեան ճեմարանի նախկին տեսուչ)։

✦ Կաթողիկոսական օծումը նշանակված է օգոստոսի 23-ին։

✦ Կաթողիկոսը Կ. Պոլսից իր հետ բերել է մի քանի եպիսկոպոսական պնակներ և եպիսկոպոսական խաչեր, որոնք տրված են եղել նախորդ կաթողիկոսների օրով եպիսկոպոսների և վարդապետների, բայց վերջիններիս մահից յետոյ չեն վերադարձվել էջմիածնին։

ՄԱՄՈՒԼ

Յուլիսի 5-ից Թիֆլիսում սկսեց հրատարակվել մի նոր օրաթերթ զրական, քաղաքական, հասարակական և առևտրա-արդիւնաբերական բովանդակութեամբ, որի խմբագիր-հրատարակիչն է Ա. Երիցեան։

Առաջնորդող յօդուածի մէջ խմբագրութիւնը այն մրցքն է յայտնում, թէ նա հանդէս չէ գալիս ծառայելու առանձին խմբակցութիւնների, այլ նա պէտք է ծառայէ մի ամբողջութեան և այդ ամբողջութիւնն է հայ ազգը իր բոլոր խաւերով, իր ցաւերով։

Վերջին մի քանի տարին մեր մէջ այնքան մեծ թափով բազմաբդէտ և խայտաճամուկ ուղղութեան թերթեր երևացին, զանազան մեծ-մեծ խոստումներով, դաւանանքների յայտարարութեամբ, բայց անհետանալով հետզհետէ ասուպների նման, որ այժմ, երբ մի նոր թերթ է երևում, մարդ սկսում է անվստահութեամբ է վերաբերվում նրա յարատևութեան և ուղղութեան կայունութեան մասին։

Անկեղծօրէն կը ցանկանք, որ նոր թերթ «Սուրհանդակը» չը լինէր այդ ասուպներից և կարողանար ծառայել հայ ժողովրդին, ինչպէս ինքն է խոստանում։

Ապագայում, երբ թերթի ուղղութիւնն աւելի կը պարզվի, մենք դարձեալ կը խօսենք նրա մասին։

*

Երուսաղէմի հայոց վանքի խնդիրը կամ, ինչպէս Կ. Պոլսի թերթերն են անուանում, սարիսական խնդիրը մի նոր մեծ ցաւ է պատրաստվում դառնալ հայ ժողովրդի համար։

Եւ արտասահմանեան հայ մամուլը չէ խղճահարվում այդ տիրոյթ և կեղտոտ հարցի մէջ խառնել և Ամենայն Հայոց Կաթողիկոսին։ Կահիրէի մէջ հրատարակվող «Արշալոյս» թերթը տպել է իր № 73-ի մէջ մի վերաւորական յօդուած Մատթէոս II-ի հասցէին, նրան համարելով պատճառ Երուսաղէմի բոլոր չարիքներին։ Եւ եթէ ի նկատի ունենանք, որ այդ զրպարտական յօդուածը թերթը տպել է Երուսաղէմի խնդրի առիթով իբրև հերքումն Արշակ Զօպանեանի վերջերս Խրիմեանի մասին տըպած քննադատական յօդուածին, մենք կը հասկանանք թէ այդ յօդուածի շարժառիթները և թէ նրա ազդիւրը... Ինչպէս երևում է, Մատթէոս II-ի քարոզած օրինապահութիւնը, կարգապահութիւնը, խաղաղասիրութիւնը ոմանց քմքին ախորժելի չէ, բայց մենք լիայոյս ենք, որ այդ մեծ սկզբունքները շուտով կը տիրեն մեր բոլոր ազգային-եկեղեցական հաստատութիւնների և վարչութիւնների մէջ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳ. ԳՈՐԾ.

4 յուլիսի

ՊԱԻԼՕԴՐԱԴ։ Հայ գնողների ջնասակար գործունէութիւնը թուլացնելու համար գաւառի գիւղատնտեսական ընկերութիւնները շտեմարաններ բաց արին հայ գնելու նպատակով ընկերութեան անդամների և ուրիշ գիւղացիների համար շուկայի գներով։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ։ Յիրեկով Մալմէից շոգենաւով եկան Ստոկհոլմից աքսորված ռուսները։ Ոստիկանութիւնը սակայն չը թոյլատրեց նրանց ափ իջնել, և այդ պատճառով նրանց կը փոխադրեն Լիբէկ։

ՊԱՐԻԶ։ Հաւասը հաղորդում է, որ Իլիդա նահանգում սաորիերկրայ ցնցումները շարունակվում են։ Պուխիսի գիւղի մօտ, ուր բոլոր տները աւերված են, 50 մարդ ջնասուածքներ ստացան, նրանցից 10-ը մահացու։ 25 սանտիմէտր լայնութիւն ունեցող բացված ճեղքից հոսում է լաւան։ Աւելի ուշ ստացված տեղեկութիւնների համեմատ Պօցանտում նպանվեցին 2, Դամիզում 4, վիրաւորված են 24 հոգի։ Ամալիաս գիւղի երեք քառորդը աւերված է։ Վնասված գիւղերի ընակիչները գիշերը բացօդեայ են անցկացնում։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ։ Ժամանեցին ֆրանսիական պարլամենտի 56 անդամներ իրանց ամուսիններով և դուստրներով ըէյխստատն այցելելու համար։

ՎԼՈԴԱՎԱ։ Մաղթանք կատարելուց յետոյ՝ Վարշավայի գեներալ-նահանգապետի, իշխանաւոր անձանց և բազմահազար ժողովրդի ներկայութեամբ բացվեց յուշարձանը, որ կառուցված է Վլոդավայի գաւառի ընակիչների միջոցներով ի յիշատակ նոցին Մեծութիւնների գտնվելուն Վլոդավայում 1903 թ-ին։

ՄՈՍԿՎԱ։ Սիբիրի էկսպրէսով Հեռաւոր Արևելքից ժամանեց եգիպտական պրինց Մահմէդ-Ալի-Բիդա։ Պրինցը Վարշավայի վրայով ճանապարհ ընկաւ Բերլին։

6 յուլիսի

ԿԱԼԷ։ Առաւօտեան 7 ժամ 2 րոպէին Լատամը սկսեց աէրոպլանով փորձնական թռիչք կատարել Ջրանցքի վրայով, որը աջողութեամբ բարձրացաւ ֆրանսիական ափից։ Ափից 18 կիլոմէտր հեռաւորութեամբ մօտօրի փչանալու պատճառով Լատամը ծովը ընկաւ։ Բուկսիրային շոգենաւը Կալէ յետ տարաւ Լատամին և աէրոպլանը, որը ըստ երևոյթին ջնասված է։ Լատամը անվնաս է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Արտակարգ պաշտպանութեան գործողութիւնների ժամանակամիջոցը երկարացված է Պետերբուրգում և Պետերբուրգի նահանգում 6 ամսով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բոստոյ Դօնի վրա նահանգական դատարանի բացման ժամանակամիջոցը նշանակված է 1909 թւի հոկտեմբերի 1-ը։

ՄԱԴՐԻԴ։ Մոլիլի մօտ Մարոկկոյում յուլիսի 5-ին տեղի ունեցաւ յամառ կռիւ, որը վերսկսվեց գիշերը և շարունակվեց յուլիսի 6-ին առաւօտեան։ Հաղորդում են նշանաւոր կորուստների մասին սպանացիների կողմից։

ՎԷՐԴԷՆ։ «Հօհէնցօլէրն» զբօսանաւով ժամանեց Վիլհէլմ կայսրը։

ՄԱԴՐԻԴ։ Կարլիստների կուսակցութեան գլուխը Վարէզիից մի հեռագիր ստացաւ, որի մէջ հաղորդվում է բուրբօնեան դօն Կարլոսի և Մադրիդի դքսի յանկարծամահ լինելու մասին սրտի պայթումից։

ԲԵՐԼԻՆ։ Ցերեկով նոր տրէկում, հին բուսաբանական այգում, երկու ժօտօրների ընդհարման ժամանակ մէկը նրանցից, ամբողջապէս բոցավառված, դուրս գցվեց հասարակութեան մէջ, որի ժամանակ սպանվեցին 7 մարդ, ծանր վիրաւորվեցին մօտ 30 մարդ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԾԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՅ ՈՒՍՈՒՑՉՈՒԹԵԱՆ, որ Գանձակի ս. Յովհաննէս եկ. ծխ. դպրոցի հոգաբարձութեան յայտարարութիւնն, որով նոր ուսուցչական խումբ և նոր աւագ-ուսուցիչ է հրաւիրվում, գտնելով անհիմն ու ապօրինի՝ թեմիս դպրոցական խորհրդին յանձնված է մի գրութիւն, որի փաստացի պատճառաբանութեամբ հոգաբարձութեան այդ որոշումներին ոյժ չունեն նոր խնդրատուներին բաւարարութիւն տալու։ Այդ գրութիւնից պարզ են հետևեալ կէտերը.—

1) Տարոյս ուսուցչ. խումբը մնում է իր տեղն և ցայսօր ոչ պաշտօնապէս լուծված է և ոչ էլ մէկն ու մէկին հեռացնելու մասին թեմական խորհրդի շրջաբերականի համաձայն՝ պատճառաբանեալ գրութիւն ներկայացրած։ Խումբը յունիսին ցրվելով ամբանոց՝ օգոստոսին դալու է իր պաշտօնատեղին։

2) Աւագ-ուսուցիչը ևս մնում է իր տեղում նաև հետևեալ հիման վրա. յունիսի 18-ի հոգաբարձական ժողովի որոշման համաձայն (տես գրագ. ժապաւ. մատեան ևս) դպրոցի պիտոյքները ստուգվելուց յետոյ՝ յանձնված է աւագին ի պահիստ և գործադրութիւն 1909/1910 ուս. տար. այդ արձանագրութիւնը ստորագրել են հոգաբարձու բոլոր չորս անդամները։

Յայտնելով այս ամենը՝ մեր բարի ցանկութիւնն է, որ ուսուցիչները իրանց գիմումներով պատճառ չը դառնան խմբիս պառիւը արատաւորելու և յանուն հոգաբարձական ոտնձգութիւնների մեր իրաւունքները ոտնահարելու։

Ի դիմաց խմբի՝ աւագ-ուսուց.
Յակ. Աղաբաբ
Քարտուղար՝ Մ. Խաչիկեան
624. 2—2

ԱՆԴՐԿՈՎԿՍԵԱՆ ԵՐԿԹՈՒՂԻ

Ամարային երթևեկութիւն
(Թիֆլիսի ժամանակով)

Թիֆլիսից մեկնում է

ԲԱԳՈՒ՝ ՊՕՍՏԱՏԱՐ գնացքը 11 ժ. 38 ր. երեկ., Գանձակ է հասնում 6 ժ. 1 ր. առ., Եւլախ՝ 7 ժ. 58 ր. առ., Հաջի-Կաբուլ 1 ժ. 12 ր. ցերեկ. Բալաջարի 4 ժ. 43 ր., Բագու՝ 6 ժ. 7 ր. երեկ.։ ՄԱՐԴԱՏԱՐ ԳՆԱՑՔ № 6՝ 7 ժ. 36 ր. առ., Գանձակ է հասնում 1 ժ. 41 ր. ցերեկ., Եւլախ՝ 3 ժ. 36 ր. ցերեկ., Հաջի-Կաբուլ՝ 8 ժ. 15 ր. երեկ., Բալաջարի՝ 11 ժ. 37 ր. գիշ., Բագու՝ 12 ժ. 44 ր. գիշ.։ ՄԱՐԴԱՏԱՐ ԳՆԱՑՔ № 12՝ 10 ժ. 11 ր. երեկ., Գանձակ՝ 4 ժ. 13 ր. առ., Եւլախ՝ 6 ժ. 8 ր. առ., Հաջի-Կաբուլ՝ 10 ժ. 32 ր. Բալաջարի 1 ժ. 44 ր. ցերեկ., Բագու՝ 2 ժ. 18 ցերեկ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ ՊՕՍՏԱՏԱՐ 1 ժ. 44 ր. գիշեր., Ալէքսանդրոպոլ հասնում 12 ժ. 35 ցերեկ., Ուլուխանլու՝ 6 ժ. 11 ր. առ., Զուլֆա՝ 1 ժ. 10 ր. գիշեր.։ ՄԱՐԴԱՏԱՐ ԱՊՐԱՆՔ. 5 ժ. երեկ., Ալէքսանդրոպոլ հասնում 3 ժ. 38 ր. առաւ., Ուլուխանլու՝ 9 ժ. 12 ր. առաւ., Երևան՝ 10 ժ. 7 ր. առ.։

ԲԱԹՈՒՄ՝ ԱՐԱԳ. ԳՆԱՑՔ 8 ժ. 31 ր. երեկ., Բաթում է հասնում 7 ժ. 41 ր. առ.։ ՊՕՍՏԱՏԱՐ՝ 9 ժ. 4 ր. երեկ., Բաթում է հասնում 10 ժ. 33 ր. առ.։ ՄԱՐԴԱՏԱՐ՝ 1 ժ. 1 ր. գիշ., Բաթում է հասնում 2 ժ. 34 ր. ցերեկ.։

Թիֆլիս է հասնում

ԲԱԳՈՒԻՑ՝ ՊՕՍՏԱՏ. ԳՆԱՑՔԸ 8 ժ. 6 ր. առաւ. ՄԱՐԴԱՏԱՐ № 5՝ 12 ժ. 11 ր. գիշ.։ ՄԱՐԴԱՏԱՐ. № 11՝ 10 ժ. 45 ր. առ.։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ ԱՐԱԳ. 9 ժ. 36 ր. առ., ՊՕՍՏ. 10 ժ. 38 ր. երեկ., ՄԱՐԴԱՏԱՐ՝ 8 ժ. 42 ր. առ.։

ՋՈՒԼՖԱՅԻՑ-ԵՐԵՒԱՆ՝ ՊՕՍՏ. 6 ժ. 26 ր. երեկ. ՄԱՐԴԱՏԱՐ-ԱՊՐԱՆՔ. 6 ժ. 27 ր. ցերեկ.։

Բ Ի Ր Ե Կ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Մասնագէտ վենէրական (սիֆիլիս), միզասեռական և մորթու ցաւերի։ Ընդունում է հիւանդ. Կովկասեան հանք. ջրերում—ՊԵՍՏԻԳՕՐՍԿՈՒՄ և ԿԻՍԼՕՎՈՂՍԿՈՒՄ։ Հասցէն՝ Կիսլովոդսկ, հիւրանոց «Ռօսսիա»։
(օ. մ.) 100—100

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓՆՏՌՈՒՄ ԵՄ

Կար ու ձեի և ձեռագործի վարժուհուհեան տեղ և ընդունում եմ աշակերտուհիներ տանը։ Ունեմ ատտեստատ և վկայական։ Հասցէս՝ Тер-Гукасовская, № 30.
Հռիփսիմէ Թադէոսեան
(չ. ու. կ.) 632. 3—1

Հրատարակութիւն Գ. Գալստեանի № 37

Ա. ԽԻԼԼ ԼՕՌԻՍ

ՍՕՑԻՕԼՕԳԻԱ

Զբաղման առարկան, դպրոցները և նորագոյն յառաջադիմութիւնները։ Դասախօսութիւններ կարդացված Պաղուայի համալսարանում 1900 թ. յունվարից մինչև մայիս։
Գերմաներէնից թարգմանեց
Pessimist.
Գինն է 60 կ.
Դիմել՝ Тифлисъ, книж. магазинъ „Гуттенбергъ", Г. И. Галустяну.
613. 3—2

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ
ՅՈՎՍԷՓ
Մելիք-Զհանեանցի
Тифлисъ, Лермонтовская ул., № 4 (близъ III мужск. гимназіи)
Ընդունվում են աշակերտներ գիշերօթիկ և երթևեկ և պատրաստվում են բոլոր միջնակարգ դպրոցների համար։ Աւանդվում են ռուս, հայ, գերման, լատին և ֆրանսիական լեզուներ։
(օ. մ.) 604. 20—3

Մաշ Բաղլուինձներին
Նորութիւն. rէկլամ չէ.
«ԿԼՕՊՕՎԻՆ»
Շուտափոյթ ոչնչացնում է բաղլինջներին և նրբանց սաղմը։ Սրուակի գինը 35 կոպ.։ Պահանջեք միայն ԱԽՕԲԱՁԷԻ մօտ, ԹԻՖԼԻՍՈՒՄ։ Ուղարկում ենք վերադիր վճարով։ Դեղավաճառներին զեղչ։ Պահանջեցէք յամառօրէն «ԿԼՕՊՕՎԻՆ ԱԽՕԲԱՁԷ»։
Հասցէ՝ Тифлисъ, памятникъ Воронцова, ул. Некрасова, № 14, складъ Ахобадзе.
(օ. մ.) 568. 30—12

Հայոց լեզուն տիրապետող
Օրիորդ
տնային վարժուհու ցենզով և շատ Մօսկվայի Մանկավարժական Կուրսերում, ցանկանում է ունենալ դասեր հայոց դպրոցներում՝ թւաբանութեան և բնագիտութեան առարկաներից։ Պայմանների մասին դիմել տ. Թամարա Կաճկաճեանին հետևեալ հասցէով. Москва, Бронная, Б. Казихинскій пер. д. Ельчинскаго, кв. 23.
(չ. չ. ու.) 617. 3—3

Մամուլի տակից դուրս եկաւ
ՀԻՆ-ՈՒԽՏԻ ՆԻՒԹԻ ՄՇԱԿՈՒԹԻՒՆԸ
(Երկրորդ տպագրութեամբ)
Կարելի է դիմել Թիֆլիսի հայ գրավաճառներին։
Սահակ ա.-ք. Սահակեան
(օ. մ.) 601. 5—4

ԱՅԳԻ-ՃԱՇԱՐԱՆ
ԻԻԺԱՆԻ ԸՆԿ.
Դվորցովայա փող., Վրաց Ազնվական. ամարային Թատրոնին կից։ Տելէֆոն № 233.
Այգում ամեն օր նուագում է լարանուագների երաժշտախումբը՝ պ. Պ. Պալիեվի ղեկավարութեամբ, ցերեկ. ժամը 2—4-ը և երեկ. 9—2-ը գիշ.։ ՃԱՇ.—2 տեսակ կերակուր՝ 60 կ., 3 տես.՝ 80 կ., 4 տես.՝ 1 ր.։ Ամեն տեսակ ուտելեղէնների և խմիչքեղէնների համար առանձին պրէյս-կուրանտ։
✦ Գները չափաւոր են ✦
Այգի-ճաշարանի մուտքը ձրի է։
(ա.օ.) 546. 50—23

Լոյս տեսաւ
Ռ. Խան-Ազատ եւ Գ. Վարդանեան
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
27 նկարներով և մի մեծ գունաւոր քարտէսով։
Դասընթացք ծիս. դպրոցների IV բաժանմունքի և ժողովրդական ընթերցանութեան համար։
Գինն է 75 կոպ.
Գլխաւոր պահեստը «Գուտտեմբերգ» գրավաճառանոցում. կարելի է դիմել և հեղինակներին՝ — Тифлисъ, Сурпъ-Нишанское училище.
(օ. մ.) 625. 10—1

Համալսարանական
ՈՒՍՈՒՑԻՉ
Աւարտելով Ժընէվի համալսարանի հասարակական գիտութիւնների մասնաճիւղը, փնտռում եմ ուսուցչութեան պաշտօն հայկական միջնակարգ դպրոցներում։
Մինչև յուլիս 15-ը դիմել Ժընէվ (Genève (Suisse) Roseraie 39), իսկ 15-ից յետոյ՝ Թաւրիզ (Tauris, (Perse) T. Ter-Hacobian).
Տիգրան Տէր-Յակոբեան
(չ. շ.) 663. 2—1

ԴԱՆՁԱԿԻ Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտնում է ի գիտութիւն ցանկացողների, որ նրա խնամքին յանձնված ուսումնարանում եկող 1909—1910 ուսումն. տարվայ համար հրաւիրվում են ուսուցիչ-ուսուցչուհիներ հետևեալ պայմաններով. առաջնակարգ առարկաների (հայոց լ., ռուսաց լ. և թւաբանութիւն) դասագինը 25 ր., իսկ մնացեալներինը—22 ր.։ Աւագ ուսուցիչը բացի իր աւանդելի առարկաների վարձը, կը ստանայ աւագութեան համար 250 ր.։ Ցանկացողները դիմելու են մինչև յուլիսի 20-ը՝ Елисаветполь, Попечительству церкви св. Іоанна. Ընտրութեան ժամանակ առաւելութիւն կը տրվի դպրոցի նախկին ուսուցիչ-ուսուցչուհիներին։

Թիֆլիսի Կենտրոնական Գրավաճառանոցում

վաճառվում են հետևեալ գրքերը.
Արլեան, Անկոչ հիւր, պիէս մի գործողութեամբ, գ. 25 կ.
Աղանեան, Կարգ Աստուածապաշտութեան Հայաստ. ս. Եկեղեցւոյ, գ. 50 կ.
Առաքելեան, Ջեռնարկ տարրական տրամաբանութ., հոգեբանութ. և բանաֆիլսուֆ. գ. 50 կ.
Արլօվակի, Մանկական ակումբները Ստօքհօլմում, գ. 08 կ.
Բօկլ, Անգլիայի քաղաքակրթութեան պատմութիւնը. գ. 75 կ.
Գեղամեան, Պատմական քաղուածներ. Ա. պր. գ. 30 կ., Բ. պր. 30 կ., Գ. պր. գ. 40 կ.
Դէմօլդէր, Աղքատների սիրոյը. գ. 10 կ.
Դօրբինին, Հին Արևելքի քաղաքակրթութիւնը. գ. 1 ր.
Եղիազարեան, Մատենախօսութ. գ. 1 ր. 25 կ.
Երզնկեան, Ուսումն Աստուածապաշտութեան Հայաստ. Առաքելական ս. Եկ. գ. 50 կ.
Թոփչեան, Երիտասարդ-Թիւրքիան և հայերը. գ. 60 կ.
Լուկաշեվիչ, Մեղանչել եմ. գ. 15 կ.
Հայնէի, Ընտիր մտքեր. գ. 40 կ.
Մանուէլեան, Դրամատիկական էսքիզներ. գիրք Ա. գ. 35 կ.
Մանուկեան, Փնջիկ. գ. 30 կ.
Մելիք-Շահնազարեան, Թուսահայերի գիւղատնտես. վիճակը և գիւղ. դպրոցների կարիքը, գ. 15 կ.
Մելիք-Սողոմոնեան, Արեան ձայներ. գ. 50 կ.
Նազարեան, Խաչեր. գ. 40 կ.
Շտաուդէ, Հին ուխտի նիւթի մշակութիւնը. թարգ. Ս. ա. քահ. Սահակեանի, հատոր Ա. գ. 80 կ., հատ. Բ. գ. 85 կ.
Պալասանեան, Պատմութիւն հայոց՝ սկզբից մինչև մեր օրերը. գ. 1 ր. 50 կ.
Զիլանի, Աշըղ Ղարիբի հէքեաթը. գ. 40 կ.
» Շահ-Իսմայիլի հէք. գ. 30 կ.
» Քարամ և Ալիի. հէք. 60 կ.
Նալբանդեան, Բարոյախօսութիւն. համառ. և փոխ. Ս. ա. քահ. Սահակեանց. գ. 50 կ.
Տէր-Ղազարեանց, Հանրամատչելի բառարան օտարազգի բառերի. գ. 1 ր.
Տէր-Յովհաննիսեան, Ծաղկեփունջ, ամենատարածված ընտիր երգերի ժողովածու. գ. 40 կ.
634. 1—1

ՆԱԽԱԶԳՈՒ ՇԱՑՈՒՄՆ
Դ. Զ. ՍԱՐԱՋԵՎ
ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՐԿԱ
Գրասենեակից Թիֆլիսում
Մեր ֆիրմայի հռչակով ԿԱՄԵՆԱԼՈՎ ՕԳՏՎԵԼ՝ մի քանի համանուն և ուրիշ ֆիրմաներ վաճառքի են հանել զտված օղի և այլ խմիչքեղէն մեր էտիկէտներին և ապրանքադրոշմին միանգամայն նմանեցրած էտիկէտներով և ապրանքադրոշմով պ. պ. սպառողներին մոլորեցնելու նպատակով։
Մի քանիսները նոյն իսկ չեն քաշվել էտիկէտների վրա նշանակել
խոշոր տառերով Դ. Զ. Սարաջեվ, իսկ մանրատառ, համարեա չը նկատվող տակագրութեամբ՝ ՆԱԽԿԻՆ ԾԱՌԱՑՈՂՆԵՐ։ Հետևաբար գրասենեակը խնդրում է մեր ապրանքը պահանջելուց ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ դարձնել անուան, հօրանուան և ազգանունի սկզբնատառերի վրա՝ Դ. Զ. ՍԱՐԱՋԵՎ, միայն առանց «ՆԱԽԿԻՆ ԾԱՌԱՑՈՂՆԵՐ» յաւելուածի, նոյնպէս և գործարանային գրոշմի վրա՝ «ՎԱՅՐԻ ՈՉԽԱՐ ԺԱՅՌԻ ՎՐԱ»։
(հ.կ.) 362. 25—22

Վեղեմինսկայա փող. № 18, տուն Վարդանեանի
ՅՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ԲԱՑՎԱԾ Է
ՆՈՐ ՏՊԱՐԱՆ
„ԿՈՒԼՏՈՒՐԱ" ԸՆԿ.
որի մասին յայտնում էր «ՊՐՕԳՐԷՍ» տպարանի միացեալ ընկերները ի գիտութիւն յարգելի հասարակութեան։
«ԿՈՒԼՏՈՒՐԱ» տպարանում ստացված են մեծ քանակութեամբ Ռուսաստանի յայտնի ֆիրմաներից տպագրակ. նորագոյն օրնամէնտներ, ծաղկատառեր, ինչպէս նաև հայկական բազմատեսակ տառեր։
Պատուէրները կատարվում են ճշդութեամբ, արագ և ձեռնտու ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ։
(հ.կ.հ.) 602. 3—3 Յարգանօք՝ ՏՊԱՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

200 ՐՈՒԲԼԻ ՆՈՒԷՐ ԵՆՔ ՏԱԼԻՍ

ով ապացուցի, թէ մեր ապրանքը չէ համապատասխանում գինին։ 12 ր. տեղ միայն 3 ր. 95 կ. ուղարկում ենք 10 անհրաժեշտ, արժէքաւոր իր. 1) սև պղպ. տաժ. անկէր կամ կանանց ցիլինդ., 40 ժ. մէկ, առանց բանալիի լարվող ժամացոյց, բօպէ առ բօպէ ճշգած, 8 տարվայ երաշխաւորութեամբ. 2) գեղեցիկ, չը սևացող շղթայ. 3) նոյնպիսի նորաձև բրելօկ. 4) զամչի պարկ, ժամաց. փչանալուց պահելու. 5) կաշուէ նորաձև քսակ 6 բաժ., հարթ և գրպանում պահելու խիստ նպաստաւոր. 6) շահաւէտ նորոյթ—ամերիկակ. անվանդ «Սանիտաս» ածելի, որով ամեն մարդ, առանց որևէ պատրաստութեան կարող է անվնաս և շատ հեշտ սափրվել. 7) սափրվելու վրձին. 8) նիկելի թաս. 9) ածելին սրելու փոկ. 10) գեղ. դուբլէ-մատանի «Օպալ» քարով։ Այս բոլոր իրերն ուղարկում ենք միայն 3 ր. 95 կ., 2 գարնիտ. 7 ր. 40 կ., պատուէրն ստանալուն պէս, վեր. վճ. և առանց կանխավճ.։ Նոյնպիսի գարնիտ., աւելի լաւ մեխանիզմ ժամացոյցով, 4 ր. 50 կ., 2-ը 8 ր. 50 կ.։ Նոյնպիսի գարնիտ. 84 պր. արծաթէ ժամացոյցով՝ 8 ր. 25 կ., 2 գարնիտ.—16 ր.։ 1—2 գարնիտ. ճանապ. 40 կ. (Սիբիր 75 կ.)։ Հասցէն՝ Т-во «ЗАРЯ», Варшава. Отдѣл. 23.
(9 23, յուլ. 7) (В. 37397) 526. 3—3

„Ա. Ի. ԱՄԻՐԱՂԵԱՆ"
ՖԻՐՄԱՆ
ՓՈԽԱԴՐՎԵԼ Է Թամամշեվի քարվանսարան, №№ 19, 22 և 23.
(8,10,14,19,28) 636. 5—1

Ա. ՄՕԶԷՐ

Ժամացոյցների խոշոր ֆաբրիկանտ, աշխարհիս յայտնի Ա. Մօզէրը իր ֆաբրիկայից բաց չէ թողնում չը ստուգված ժամացոյցներ։ Ա. ՄՕԶԷՐԸ ծառայում է իբրև ամենալաւ երաշխաւորութիւն ժամացոյցների, ամրութեան և ճշդութեան։ Ա. ՄՕԶԷՐԻ ԺԱՄԱՑՈՅՑԸ, սև պղպ., տղամարդկ., բաց, շատ տափակ (արծաթի բուբլու չափ), ֆանտաստ. ցիֆերբլ., լարելը առանց բանալիի, բէյժնոտաբը 15 բարի վրա, ձեր նոր տեսակի, շքեղ—12 բուբլու փոխար. ՄԻԱՅՆ 3 ր. 25 կ., 2 հատ—6 բուբ.։ Կանանց ժամ., բաց՝ 4 ր.։ Ճանապարհածախքը 1—4 հատի համար 40 կ., Սիբիր՝ 75 կ.։ Պատուէրները կատարվում են վերադիր վճ. և առանց կանխավճ.։ Շքեղ շղթաներ, նորաձև ոսկուց, բրէլօկով—հատը 75 կ. և 1 ր. 50 կոп, երկարը՝ 2 ր. 50 կ. և 3 ր. 50 կ.։ Հասցէն՝ Т—во „Патентъ", Варшава, Св. Креста № 48. Отдѣл. 23. Նախազգուշութիւն.—Պ. պ. գնողների ուշադրութիւն ենք դարձնում, որ մօզէրեան իսկական ժամացոյցներն են «Ա. ՄՕԶԷՐ»։
(10, 24. յուլ. 8) (В. 37493) 527 3—3

Электропечатня Н. Г. Аганьянцъ
Полицейская 7.